



"ԱՀԱՐՈՆ ՊԱՐԱԴԻԳՄԱ"

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտնեցումների ուղույն համակարգ

«Բեստինգ Փոյնթ»

ԱՄՆ ՄՁԳ «Առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման» ծրագիր

«Ահարոն Պարադիգմա»

խորհրդատվական-հետազոտական ընկերություն.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ կատարված հետազոտության

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՄԱՍ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ.....	3
1. Հետազոտության առարկան	3
2. Հետազոտության սուբյեկտները և կազմակերպումը	4
3. Հաշվետվություն-վերլուծության շարադրումը և օգտագործման մի քանի առաջարկություններ	10
ՄԱՍ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ	
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ.....	13
1. Ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի մասին օրենսդրությունը	13
2. Վարչարարական և կիրառական խնդիրները	16
3. Հետազոտության հիմնական արդյունքները	26
ՄԱՍ 3. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԳՐԱՆՑՈՒՄԸ.....	28
1. Գրանցման իրավական ընթացակարգը	28
2. Գրանցման վարչարարական և կիրառական խնդիրները	32
3. Հետազոտության հիմնական արդյունքները	41
ՄԱՍ 4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ	43
1. Լիցենզավորման իրավական գործընթացը	43
2. Լիցենզավորման վարչարարական և իրավական խնդիրները	46
3. Հետազոտության հիմնական արդյունքները	53
ՄԱՍ 5. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	57
Հավելված 1. Ընտրանքի կազմակերպման վերաբերյալ աղյուսակներ (1-6)	61
Հավելված 2. Հարցման արդյունքային աղյուսակներ (7-155).....	67

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտության կոնկրետ նպատակն է՝ գործարար միջավայրի ներկայացուցիչների շրջանում հարցում կատարելու միջոցով պարզել, թե նրանք ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ մասին օրենսդրությանն առնչվող ինչ խնդիրներ ունեն, ձեռնարկատիրական գործունեություն սկսելիս ինչ օրենսդրական կամ վարչարարական խոչընդոտների են հանդիպում՝ ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու, լիցենզիա ստանալու հետ կապված վարույթներում: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ 2001 թվականին ընդունվեցին նշված ոլորտներին առնչվող հինգ օրենքներ. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Անհատ ձեռնարկատիրոջ մասին», «Լիցենզավորման մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին»: Անցած երեք տարիներին այդ օրենքների կիրարկման և գործողության ընթացքում որոշակի խնդիրներ են առաջացել, որոնք վերլուծության և գնահատման կարիք ունեն:

Սույն հետազոտության կարևորությունն ընդունվել է նաև գործարար միությունների կողմից, ի հավաստումն որի իրենց անդամների վերաբերյալ տվյալներ են տրամադրել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը, «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպությունը:

Հետազոտությունը պատվիրել է ԱՄՆ Միջազգային Չարգացման գործակալության «Առևտրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման» Ծրագիրն իրականացնող ԲեառինգՓոյնթ ընկերությունը և իրականացվել է «Ահարոն Պարադիզմա» խորհրդատվական-հետազոտական ընկերության կողմից: Լոռու մարզում համագործակցվել է Գործարարության զարգացման և օժանդակության կենտրոնի, իսկ Շիրակի և Կոտայքի մարզերում՝ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հետ:

ՍԱՍ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

1. Հետազոտության առարկան

Հետազոտության հիմնական խնդիրներն էին.

1. բացահայտել, վերլուծել և գնահատել այն կիրառական և վարչարարական խնդիրները, որոնց Հայաստանյան գործարար միջավայրը հանդիպում է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Անհատ ձեռնարկատիրոջ մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքների և ձեռնարկատիրական գործ սկսելուն առնչվող այլ իրավական ակտերի օտագործման ժամանակ:

2. բացահայտել, պարզել և գնահատել՝

ա/ ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու, լիցենզիա ստանալու հետ կապված խնդիրները,

բ/ օրենսդրությանը կամ օրենսդրության կիրառմանն առնչվող բացթողումները,

գ/ օրենսդրական կամ վարչարարական բարեփոխումների անհրաժեշտությունը,

դ/ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկերը:

3. օժանդակել համապատասխան պետական մարմիններին գնահատելու իրենց գործողությունների արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում մշակելու նոր քաղաքականություն:

2. Հետազոտության սուբյեկտները և կազմակերպումը

Համաձայն Պատվիրատուի սահմանած նախապայմանների, նախատեսվում էր հարցումն իրականացնել 420 տնտեսավարող սուբյեկտների շրջանում, որից.

- ըստ տարածքային գործոնի. Երևանում՝ 210 և երեք մարզերում՝ 210
- ըստ կազմակերպա-իրավական ձևի. ընդհանուրի 50 տոկոսը պետք է լինեին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, 40 տոկոսը՝ բաժնետիրական ընկերություններ և մնացած 10 տոկոսը՝ անհատ ձեռնարկատերեր
- ըստ գենդերային գործոնի. 15 տոկոսը պետք է լինեին կին ղեկավար կամ կին-հիմնադիրով ընկերություններ
- ըստ տնտեսության ոլորտի. պետք է ընդգրկվեին իրական հատվածի բոլոր ոլորտները. արտադրություն, ծառայություններ և առևտուր
- ըստ կանոնադրական կապիտալում մասնակցության. 15 տոկոսը պետք է լինեին օտարերկրյա ներդրումով կազմակերպություններ
- ըստ ստեղծման ժամանակահատվածի. 50 տոկոսը պետք է լինեին վերջին տարվա ընթացքում ստեղծված
- ըստ գործունեության կարգավորման. 30 տոկոսը պետք է լինեին լիցենզավորվող գործունեությամբ զբաղվողներ:

Հարցումն իրականացված է և արդյունքները ներկայացվում են ստորև: Ստորև ներկայացվում են նաև այն մեթոդաբանությունը և սահմանափակումները, որոնց հետ առնչվել է «Ահարոն Պարադիզմ»-ն և որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հետազոտության արդյունքները դիտարկելու ժամանակ: Հարցաթերթը մշակվել է ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության «Առևտրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման» Ծրագրի թիմի հետ միասին: Հարցաթերթերի վրա նշված չեն պատասխանողի տվյալները, ինչը պետք է խրախուսեր անկաշկանդ պատասխանները:


Առավել բարդ խնդիրը կայանում էր ընտրանքում, քանի որ ընտրանքի գործոնները բազմաթիվ էին ու բազմազան և կարիք եղավ աշխատել վիրտուալ մի քանի հարթություններում միաժամանակ: Հարցման համար կիրառված ընտրանքի մեթոդաբանությամբ, հաջողվել է տեղեկատվություն ստանալ թվով 450 հարցվողից, այդ նպատակով դիմելով և այցելելով 665 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (հավելված 1, աղյուսակ 3): Գործադրվել են բոլոր հնարավոր ջանքերը ճշգրտորեն պահպանելու համար բոլոր նախանշված համամասնությունները: Դա հիմնականում հաջողվել է, քանի որ տեղի ունեցած որոշակի շեղումներն, ըստ մեր գնահատման, կարելի է համարել ոչ էական (հավելված 1, աղյուսակ 4): Այդ որոշակի շեղումների պատճառների շարքում են ընտրանքային գլխավոր համակցության միասնական մամուլատիպ բազայի՝ Հայաստանում առկա չլինելը, հրաժարումները, հասցեի և այլ տվյալների չհամընկնելը իրականի հետ (հավելված 1, աղյուսակ 5 և 6), մի քանի գործոնները միատեղելու ֆիզիկական դժվարությունները (Գծապատկեր 1 և 2):

Միասնական մամուլատիպ բազայի բացակայության պարագայում գործարկվել են քայլեր՝ գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի (այսուհետ նաև՝ պետական ռեգիստր) ու առևտրային բիզնես ռեգիստրներից տվյալներ հավաքագրելու համար (տես հավելված 1, աղյուսակ 1 և 2): Մեկ այլ օրինակ, ՀՀ պետական ռեգիստրից վերցվել են վերջին տարվա բոլոր գրանցված կազմակերպությունները, այսինքն այդ մասով փորձ է արվել կատարել պաշտոնական ընտրանքի 100 տոկոսանոց ընդգրկում, սակայն նույնիսկ այդ պայմաններում չի հաջողվել հասնել նախապայմանում նշված վերջին տարվա

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.


ընթացքում ստեղծված լինելու՝ 50 տոկոս ցուցանիշին: Որպես նշված խնդրի լուծում ընդգրկվել է մոտակա 2002 թվականը, առավել ևս, որ դիտարկվող հինգ առևտրային օրենքների ճնշող մեծամասնությունը սկսել է կիրառվել 2001 թվականի վերջից կամ 2002թվականի սկզբից:

Գծապատկեր 1. Հետազոտված անձանց բաշխման կառուցվածքն ըստ հարցվածների, հրաժարվածների և չհայտնաբերվածների




Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր 2. Ընտրանքի բաշխման կառուցվածքն ըստ ձևավորման արդյունքների



Գծապատկեր 3. Ընտրանքի համակցության կառուցվածքը



Ըստ այդմ, հաշվի առնելով հարցման յուրահատկությունն ու առանձնահատկությունները, ինչպես նաև այն, որ հարցման համար հիմնականում կիրառվել է որոշակի խմբերի մեջ՝ պատահական ընտրանքի սկզբունքը (այլ պարագայում՝ համանման հետազոտության իրականացումն անհնարին է ինչպես տեխնիկական, այնպես էլ ֆինանսական ռեալ սահմանափակումներով պայմանավորված) ստացված արդյունքները չեն կարող դասական վիճակագրության իմաստով որակվել որպես ներկայացուցչական՝ Հայաստանի ընդհանուր տնտեսության վրա ստացված արդյունքների

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

տարածման տեսանկյունով, այլ նպատակաուղղված են երևույթի միտումների, ինչպես նաև քանակական ու որակական որոշակի համամասնությունների ուսումնասիրմանը:

Հարկ է հաշվի առնել նաև մարզային կտրվածքով հավաքագրված տեղեկատվության համար հարցվողների «փոքր» համակցությունների հանգամանքը, ինչով պայմանավորված էլ մարզերի կտրվածքով ցուցանիշները միավորվել են մեկ տողում, որոնց դիտարկելիս չպետք է մոռանալ, որ այն ներկայացնում է Հայաստանի երեք մարզերի տվյալներ. Լոռվա մարզ, Շիրակի մարզ և Կոտայքի մարզ: Այդ մարզերի ընտրության համար հաշվի են առնվել ինչպես հարցման նախապայմանում նշված տնտեսական ոլորտների ներկայացուցիչների քաշխումը, այնպես էլ ընդհանրապես տնտեսական ակտիվության ցուցանիշների քաշխումը հանրապետությունում՝ համաձայն պետական վիճակագրական հրատարակումների: Մարզերի միջև քաշխումն իրականացնելիս երկրորդ փուլում հաշվի են առնվել ընտրանքի մյուս գործոնները: Հատկապես կողմնորոշող են եղել օտարերկրյա ներդրումով կազմակերպությունների քանակի պահանջի ապահովումը և վերջին տարիներին ստեղծված լինելու գործոնը (այդ պատճառով Կոտայքի մարզին բաժին է ընկել մարզերի ամբողջ քանակի մոտ կեսը):

Ընտրանքի՝ ըստ գործոնների ապահովման համար ընտրվել է հետևյալ սխեման.

- սկզբից համագործակցել ենք համապատասխան պրոֆեսիոնալ ու գործարար միությունների հետ, խնդրելով նրանց աջակցությունը իրենց անդամների ցանկը և համապատասխան տվյալները տրամադրելու համար: Ենթադրությունը կառուցվել է այն թեզի վրա, որ այդ գործարար զանգվածը հատկապես պետք է հսկված լինի համագործակցել զրուցավարների հետ և հետաքրքրված լինի Հայաստանում տնտեսական օրենսդրության առաջընթացում: Այդ իմաստով հարկ է շնորհակալություն հայտնել ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությանը, «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպությանը, Երևանի և Կոտայքի մարզի առևտրաարդյունաբերական պալատներին

- երկրորդ քայլն է եղել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին դիմելը: Համագործակցություն է կազմակերպվել ինչպես շահառուների ցուցակի տրամադրման ձևով, այնպես էլ բոլոր պատասխանողների համար մեկական օրինակ բրոշյուրի անվճար տրամադրման ձևով («Ինչպես սկսել ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանում», Երևան 2003): ՓՄՁ ՋԱԿ-ի կառույցի ուժգնացմանն է նպաստել Կոտայքի և Շիրակի մարզերում դաշտային աշխատանքների բուն անցկացումը՝ «Ահարոն Պարադիզ»-ի ընդհանուր միասնական մեթոդական կողողինացման և համագործակցության շրջանակում: Այս փուլում համագործակցել ենք ու որոշակի տվյալներ հավաքագրել «Մարկետինգի հայաստանյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունից, ինչը հատկապես օգտակար է եղել լիցենզավորվող գործունեությանը կազմակերպությունների անհրաժեշտ քանակը համարելու համար,

- երրորդ փուլում սկսել ենք աշխատել այլ պաշտոնապես վարվող տվյալների բազաների հետ, ձեռք բերելով պակասող տեղեկատվությունը «Սփյուռ» տեղեկատվական ծառայությունից և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից:

Նման ձևով ձևավորվել է 420 հասցե: Բացի այդ, հաշվի առնվելով այն հանգամանքը, որ լինելու են հրաժարումների կամ չհայտնաբերումների դեպքեր (հավելված 1, աղյուսակ 3), ինչպես նաև այն, որ լրացված հարցաթերթերը կարող են պարունակել սխալ, աղավաղումներով կամ ոչ ամբողջական լրացված պատասխաններ, պատրաստվել են 210 պահուստային հասցեներ: Նման քանակության ընդգրկումը՝ նախապայմաններում նշված 420-ի դիմաց, նպատակ է ունեցել հնարավորինս ընդլայնել ընտրանքը՝ հանրապետության համար հնարավոր ներկայացուցչական պատկեր ստանալու համար:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Իրականում հետագայում օգտատրոծվել է ամբողջ ռեզերվը և ստիպված ենք եղել նույնիսկ ձեռնարկել լրացուցիչ քայլեր՝ նպատակ ունենալով օպերատիվորեն տրամադրել գրուցավարների անհրաժեշտ լրացուցիչ հասցեներ: Արդյունքում ստացվել են 450 մշակման ենթակա պատասխաններ:

Ձուգահեռաբար աշխատանք է տարվել հարցաթերթի ձևավորման վրա, որի համար հիմք է ընդունվել ԲեառինգՓոյնթ ընկերության պատրաստած նախնական տարբերակը: Վերջնական համաձայնեցված տարբերակը բազմացվել է տպարանային եղանակով, իսկ հարցաթերթի միջոցով տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է գրուցավարների կողմից, հարցումների միջոցով:

Լռովա մարզում համագործակցել ենք, ինչպես և պլանավորված է եղել պատվիրատուի հետ սույն հետազոտության նախագծման ժամանակ, գործարարության զարգացման տեղական մի կառույցի՝ «Գործարարության զարգացման և օժանդակման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ, նպատակ ունենալով ամրապնդել տարածաշրջանային ներուժը՝ հետագայում տեղում նմանատիպ հետազոտություններ անցկացնելու համար: Բոլոր մարզերում և Երևանում հետազոտությունը կազմակերպվել է «Ահարոն Պարադիզմա»-ի կողմից, միասնական մեթոդաբանությամբ: Պատրաստված են եղել համապատասխան մեթոդական հրահանգներ գրուցավարների, ինչպես նաև տեխնոլոգիական շղթայի հաջորդ էտապների համար, ինչպես նաև գործողությունների ժամանակացույց:

Մինչ դաշտային աշխատանքները սկսելը հարցման նախապատրաստման և անցկացման նպատակով, իրականացվել են հարցագրուցավարների հավաքագրման և հրահանգավորման աշխատանքները, նրանց են հանձնվել հարցման համար անհրաժեշտ հարցաթերթերը, դիտարկման վայրերի խումբը և այլ անհրաժեշտ պարագաները: Ընդհանուր առմամբ հավաքագրվել են թվով 30 հարցագրուցավար, իսկ մեկ հարցագրուցավարի կողմից լրացվելիք հարցաթերթերի քանակը կազմել է 15 միավոր¹:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու նկատառումով, հարցվողներին անկաշկանդ պատասխանների տրամադրելու (խթանելու), ինչպես նաև գրուցավարների հետ փոխադարձ կապի և վստահության մթնոլորտ ձևավորելու նպատակով հարցվողներին են տրվել համապատասխան ձևավորված օրացույցներ («Բիզնեսի առաջին քայլերը» նշագրումով), «Ինչպես սկսել ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանում» բրոշյուր, ինչպես նաև դաշտային աշխատանքների սկսելու օրը լույս տեսած՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության թողարկած մամուլ հաղորդագրությունը 2004թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների հիմնական տնտեսական ցուցանիշների վերաբերյալ: Հարկ է նշել, որ հատկապես բրոշյուրի տրամադրումը պատասխանողների կողմից շատ լավ է ընդունվել: Բոլոր պատասխանողներին է տրամադրվել նաև համապատասխան գրություն², որով հակիրճ ներկայացվել են հարցման նպատակը, տնտեսական

¹ Յուրաքանչյուր գրուցավարի կողմից կատարված այցելությունների թիվն իրականում գերազանցել է այդ քանակը, քանի որ 450 պատասխան ստանալու համար օգտագործվել են ինչպես ամբողջ ձևավորված ռեզերվը, այնպես էլ օպերատիվ ձևով հավաքագրված լրացուցիչ այլ կազմակերպությունները: Մի քանի դեպքերում «Ահարոն Պարադիզմա»-ն խնդրել է կրկնել կամ փոխարինել հարցաթերթը, հաշվի առնելով հետազոտության նպատակների և պահանջների ցանկին չբավարարելը:

² Այն ստորագրված է եղել ԱՄՆ Միջազգային Չարգացման գործակալության «Առևտրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման» Ծրագիրն իրականացնող ԲեառինգՓոյնթ ընկերության և «Ահարոն Պարադիզմա» խորհրդատվական- հետազոտական ընկերության ներկայացուցիչների կողմից:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

հանրության և հասարակության համար պոտենցիալ օգուտը (մեկական օրինակներից ձևավորված փաթեթը կցվում է):

Հաշվի առնելով հարցաթերթի ոլորտային ուղղվածությունը, բարդությունը և գրուցավարի համապատասխան պատրաստվածության նշանակությունը, նրանց բոլորի համար պատրաստվել է ու տրամադրվել խնդրո առարկա հինգ տնտեսական օրենքների տեքստերի գրքույկ³:

Ջրուցավարների⁴ հրահանգավորման փուլում խաղարկվել են նաև այդ օրենքների՝ հարցաթերթի հետ առնչություն ունեցող համապատասխան հոդվածներն ու դրույթները:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ս.թ. հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ: Հարցագրուցավարների կողմից լրացված հարցաթերթերը, ընդունումից հետո ենթարկվել են թվաքանական և տրամաքանական ստուգման ու կողավորման, որից հետո իրականացվել է դրանց մուտքագրումը (մուտքագրման համապատասխան ծրագրի հիման վրա): Մուտքագրումից հետո համապատասխան տվյալները ենթարկվել են նաև մեքենայական ստուգման՝ սխալ, աղավաղումներով և/կամ ոչ ամբողջական լրացված հարցաթերթերի բացառման նպատակով:

Ընդհանուր առմամբ վերլուծության առումով պիտանի հարցաթերթերի քանակը կազմել է 450: Հարկ է նշել, որ դաշտային աշխատանքները ցույց տվին, որ հրաժարումների գերակշիռ մասը բաժին է ընկել օտարերկրյա ներդրումով կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, իսկ չհայտնաբերումների հիմնական մասը բաժին է ընկել ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի տվյալների բազայից ձեռք բերված հասցեներին: Վերջինս բացատրվում է այդ բազայի վարման նորմատիվային պահանջների կառուցվածքով: Մեր համոզմամբ այդ ռեեստրը օգտակար կլինի պետական գրանցում ստացած կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի անվանումների, ցանկի ու ստեղծման տարեթվի իմաստով, սակայն չի կարող համարվել օգտավետ՝ նմանատիպ կոնկրետ հետազոտությունների համար, որում կարևոր է լինում գործունեության ճշգրիտ հասցեն, տեսակը ու այլ թարմ տվյալներ: Դա է հաստատում նաև այն, որ «Սփյուռ»-ի տեղեկատվությունը եղել է առավելագույն օգտակար, թեև այնտեղ ևս առկա են դասակարգման հստակեցման որոշակի հարցեր:

Ամփոփելով հարկ է նշել նաև, որ հարցման իրականացման համար կիրառվել են վիճակագրական այնպիսի ստանդարտ գործիքներ, ինչպիսիք են դասակարգիչները, ընտրանքի կազմակերպումը, ծրագրային ապահովումը և այլն: Դուրս են բերվել մոտ 160 էլքային աղյուսակներ: Առանձին մուտքագրվել են ու սույն հաշվետվությունը պատրաստող վերլուծաբանների թիմին են հանձնվել նաև հարցվողների կողմից կատարված մոտ 230 առաջարկություններ, կարծիքներ, ռեպլիկներ, որոնց արտահայտումը խրախուսվել է գրուցավարների կողմից և խնամքով գրառվել հարցաթերթի համապատասխան մասում: Լռովա մարզի գրուցավարները, ինչպես նաև Երևանի գրուցավարներից մեկը ներկայացրել են նաև իրենց անձնական տպավորությունները և կարծիքը հետազոտության արդյունքների վերաբերյալ:

³ Այն պատրաստվել է “Իրտեկ” իրավական-տեղեկատվական համակարգի կողմից, որից օգտվելու համար հեղինակի հետ “Ահարոն Պարադիզմա”-ն կնքել է պայմանագիր հեղինակային իրավունքի օգտագործման վերաբերյալ՝ տպարանային եղանակով 40 օրինակ բազմացնելու համար:

⁴ Նորից, հաշվի առնելով հարցման առանձնահատկությունը, որպես գրուցավարներ ընդգրկվել են, հատկապես Երևանում, համալսարանների իրավաբանական ֆակուլտետների բարձր կուրսի ուսանողներ: Արդյունքները հաստատեցին այդպիսի ընտրության արդյունավետությունը:

3. Հաշվետվություն-վերլուծության շարադրումը և օգտագործման մի քանի առաջարկություններ

Սույն հաշվետվություն-վերլուծության շարադրման ժամանակ մասնագետների թիվը. Տիգրան Կարապետյան (թիմի ղեկավար), Արգամ Նազանյան, Նարինե Մելիքյան, Ահարոն Չիլինգարյան, վերլուծել են հարուստ աղյուսակային նյութը (հիմնականները կցված են սույն հաշվետվությանը որպես հավելվածներ), ծանոթացել ձեռնարկությունների (և գրուցավարների) կողմից ներկայացված առաջարկություններին, դիտողություններին, մեկնաբանություններին ու ռեպլիկներին, ուսումնասիրել հարակից օրենսդրական դաշտն ու կիրառման պրակտիկան: Նրանցից յուրաքանչյուրն անձամբ համակարգել է գրուցավարների որոշակի խմբի աշխատանք, համագործակցել այլ փորձագետների ու մասնագետների հետ: Մասնավորապես սկսած հետազոտության նախագծման փուլից իր կողմից ներկայացված առաջարկությունների ու կարծիքների համար երախտագիտության խոսք է պետք հայտնել «Բեռնափոխակ» ընկերության իրավաբան և սույն հետազոտության պատասխանատու Արսեն Նազարյանին:

Սույն հաշվետվությունից օգտվելու համար կարևոր է հաշվի առնել տերմինների հետևյալ նշանակությունը.

- **ձեռնարկություն, ձեռնարկության հիմնադրում** նշանակում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության հիմնադրում, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն սկսելու մասին որոշման կայացում: Լայն իմաստով դա «գործ սկսելն» է, տնտեսավարումը սկսելու որոշման կայացնելը:
- **օրենքի անմատչելիությունը (չիմացությունը)** նշանակում է օրենքի տեքստը ձեռքբերելու, գտնելու դժվարություն, այդ թվում՝ նյութական տեսանկյունից: Այն կարող է հանգեցնել չիմացության:
- **սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը** սպասարկելու ցանկության և հմտության դրսևորում, ինչն ըստ էության առանձին և գիտելիքների հետ միասին ձևավորում է պետական մարմնի աշխատակցի պրոֆեսիոնալիզմը (պրոֆեսիոնալ կարողությունը): Աշխատանքում այն հիմնականում օգտագործվել է սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ցածր մակարդակի իմաստով:
- **օրենքի հակասությունները և երկիմաստությունները** նշանակում է իրավական ակտի բովանդակություն, տեքստի, հոդվածի կամ դրույթի այնպիսի շարադրանք, որը կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանությունների, տարընթերցումների և կիրառման հետ կապված այլ խնդիրների: Այդ առումով, սույն հետազոտության իմաստով, «օրենքի հստակ շարադրանք» արտահայտությունն արտացոլում է հարց չառաջացնող, սպառիչ տեղեկությունը:
- **ժամանակի կորուստը** ձեռնարկատիրոջ ժամանակի անտեղի վատնումն է, որը կարող է հանգեցնել նաև նյութական վնասների:
- **օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը** իրավական ակտում այնպիսի դրույթների առկայությունն է կամ բովանդակությունը, որի արդյունքում այն դառնում է անիրագործելի:
- **բողոքարկման ընթացակարգային բարդություններ**՝ պետական մարմնի կամ պաշտոնյայի գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու, գանգատարկելու ձեռնարկատիրոջը ընձեռած հնարավորության ցածր աստիճան՝ խախտված իրավունքների վերականգնման ժամանակատարության և ծախսատարության առումով:
- **անձնական կապերի բացակայություն**՝ պաշտոնյայի կողմից ձեռնարկատիրոջ նկատմամբ

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

ցուցաբերվող անհարգելից կամ ոչ բարյացակամ վերաբերմունքի դրսևորում, որը հիմնականում կարող է պայմանավորված լինել բարեկամական, ընկերական, կամ այլ բնույթի միջանձնային հարաբերությունների, ինչպես նաև ձեռնարկատիրոջ փորձառության կամ հեղինակության բացակայությամբ:

- **օրենքի կիրառման ծախսատարությունը** իրավական ակտի պահանջներին հետամուտ լինելու համար ձեռնարկատիրոջ կողմից կատարվող այնպիսի ծախսերն են, որոնք առնչվում են ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և իրականացնելու հետ (պետական տուրքեր, որոշակի պարտադիր գործողությունների հետ կապված ծախսեր):
- **կազմակերպության վերակազմակերպումը** դա իրավաբանական անձի միացումն է, միաձուլումը, առանձնացումը, բաժանումը կամ վերակազմավորումը:
- **«մեկ պատուհանի» սկզբունքը** ձեռնարկությունը հիմնադրելու, գրանցելու կամ լիցենզիա ստանալու նպատակով ձեռնարկատիրոջն աջակցող մեխանիզմ է, որը մասնավորապես ենթադրում է նշված գործընթացների և դրանց հետ կապված գործողությունների համախմբում մեկ մարմնում:

Մասնագետները նյութի շարադրման նպատակով (նույնն է, ինչ որ հարցաթերթի մեջ) կատարել են վերը նշված հինգ օրենքների վարչարարական և կիրառական խնդիրների հետևյալ պայմանական խմբավորումը. վարչարարական խնդիրներ ասելով նկատի է առնվել օրենքի պրակտիկ կիրարկման և/կամ գործարկման ընթացքում վարչա-իրավական հարաբերությունների (համապատասխան պետական պաշտոնատար անձի գործողություններով պայմանավորված) դաշտում առաջացող խնդիրները, որոնք կապ չունեն օրենքի նորմերի, դրույթների թերությունների հետ, իսկ կիրառական խնդիրներ ասելով նկատի է ունեցվել օրենսդրական խնդիրների խումբը:

Աղյուսակների համար կիրառվել են հետևյալ պայմանական նշանակումները.

- ✓ «0.0» նշումը նշանակում է երևույթը կիրառելի չէ,
- ✓ Աղյուսակները ներկայացված են համապատասխան կառուցվածքով, մասնավորապես ըստ առարկայական կառուցվածքի և ըստ սուբյեկտների կառուցվածքի (չափի միավորը` տոկոս):

Սույն հետազոտության արդյունքների օգտագործման ուղղությամբ «Ահարոն Պարադիզմ» խորհրդատվական հետազոտական ընկերության նկատառումները և առաջարկները հետևյալն են.

- հարցման ժամանակ հաջողվեց ստանալ հարցվողների համեմատաբար բաց ու համագործակցական վերաբերմունք: Այդ է վկայում այն, որ բացի բուն հարցաթերթի 36 հարցերի` առատորեն արտահայտված են այլ առաջարկություններ,
- ստացվել է հարուստ ելքային տեղեկատվություն, ինչը փորձ է արվել ներկայացնել ոչ միայն ինֆորմատիվ, այլ նաև անալիտիկ հարթության մեջ,
- պատրաստվել են նաև մի քանի սինթետիկ, վիրտուալ աղյուսակներ. գեներային, ներդրումային, «հին» ու «նոր» ձեռնարկողի վերաբերյալ և այլն,
- սույն հաշվետվության վերջում բերված առաջարկությունները և եզրակացությունները արտացոլում են «Ահարոն Պարադիզմ»-ի մոտեցումը, այնքանով, որքանով որ հաջողվել է իմաստավորել ստացված տեղեկատվությունը,
- ձեռք է բերվել հետագայում «Առևտրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման» Ծրագրի կողմից իրականացվելիք այլ հարցումների համար պատրաստական և փորձառություն ստացած հարցվողների պոտենցիալ լավ բազա:

Առաջարկությունների հիմնական ելակետն այն է, որ ըստ մեր տպավորության հարյուրավոր հարցվողներ Հայաստանում առնչվեցին գիտական լուրջ վերաբերմունքի հետ, ստացան որոշակի տեղեկատվություն, իմպուլսներ, «վարակվեցին» բիզնես հետազոտությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելու գաղափարով: Դա վստահության գրավական է,

որը նպատակահարմար է անպայման պահպանել ու զարգացնել: Այդ իմաստով նպատակահարմար կլինի (բնական է, որ դա պետք է լինի պատվիրատուի գործնական պլանների և հնարավորությունների շրջանակում) և «Ահարոն Պարադիզմա»-ն հայտնում է իր հետևողական պատրաստակամությունը համագործակցելու «ԲեառինգՓոյնթի» հետ՝ իրականացնելու հետևյալը.

- սույն հաշվետվության արդյունքները հնարավորինս ի սպաս դնել Հայաստանում գործ սկսելու, գրանցելու և լիցենզավորման խնդիրների առաջընթացում շահագրգիռ նախարարությունների, կառավարական ու ոչ կառավարական այլ կառույցների: Հեռու ենք այն մտքից, որ նկարագրված խնդիրների պատճառը միայն «անբարեհաճ չինովնիկն» է կամ «թերի օրենքը»: Իրականում կան բազմաթիվ սովորության, սոցիալ-հոգեբանական ու այլ գործոններ, որոնք պետք է հաշվի առնվեն և շատ հուսով ենք, որ այս հարցման արդյունքները տալիս են դրա համար լրացուցիչ համապատասխան հնարավորություն,
- բոլոր պատասխանող տնտեսավարող սուբյեկտներին (450 հասցե) ուղարկել հետադարձ կապի նամակներ, վերահաստատելով, որ իրենց մասնակցությունը կարևոր է եղել և, որ ամենակարևորն է, իրենց ձայնը լսվել է ու ամփոփված տեղեկատվություն ու առաջարկություններ ներկայացվել են թվարկված կոնկրետ կառույցների ուշադրությանը: Դա փարատելու է հարցվողների այն կասկածամտությանը, որ սա հերթական շարքային մի միջոցառում էր, որը ոչ մի նոր բանի չի հանգեցնելու, և որ խնդիրների լուծման այս ճանապարհը վստահելի չէ: Դրանով մենք պահած կլինենք նաև մեր խոսքը, որ գրավոր հղել ենք յուրաքանչյուր հարցվողի՝ հարցազրույցից առաջ,
- ցանկալի է այդ նույն գրությամբ տեղեկացնել նաև ինտերնետային այն կայքի մասին, որտեղ զետեղված են հարցման արդյունքային նյութերը, մասնավորապես սույն հաշվետվության համառոտագիրը և մի քանի առավել էական ելքային աղյուսակները,
- ցանկալի է մեր հետ համագործակցած գործարար միություններին հետադարձ շնորհակալական գրությունների հետ մեկտեղ տրամադրել հաշվետվության օրինակ, թեկուզ համառոտագրի տեսքով, ի նշան երախտիքի նրանց կողմից ցուցաբերված էական օժանդակության և, ի նշանավորումն այն կարևոր գործի, որ կատարում են իրենք Հայաստանի տնտեսության ու հասարակական առաջընթացի համար: ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության «Առևտրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման» Ծրագիրն ևս միտված է նույն խնդրին:

ՄԱՍ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

1. Ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի մասին օրենսդրությունը

1999 թվականի հունվարից գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվեցին իրավաբանական անձանց տեսակները, և ընկերությունները դասվեցին առևտրային կազմակերպությունների շարքում: Առևտրային կազմակերպություններն իրենց հերթին դասակարգվեցին տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների: Վերջիններիս կազմում ընդգրկվում են սահմանափակ պատասխանատվությամբ, լրացուցիչ պատասխանատվությամբ⁵ և բաժնետիրական ընկերությունները: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նաև երկու առանձին բաժիններով սահմանել է սահանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների հիմնական իրավական կանոնները, ընդգծելով դրանց մասին առանձին օրենքների առկայության անհրաժեշտությունը: 2001 թվականի հոկտեմբերի 24-ին Հայաստանի խորհրդարանն ընդունեց «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ նույն թվականի դեկտեմբերի 7-ից:⁶ Իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը Հայաստանի խորհրդարանն ընդունել է 2001 թվականի սեպտեմբերի 25-ին, որն ուժի մեջ է մտել նույն թվականի դեկտեմբերի 6-ին:⁷

Ընկերությունների մասին ընդունված այդ երկու օրենքներն էլ որոշակիորեն բարելավեցին Հայաստանյան գործարար միջավայրում առավել մեծ տարածում ստացած իրավաբանական անձանց նշված երկու տեսակների գործունեության կանոնակարգման աստիճանը: Իսկ ինչպիսի՞ն են սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների գործունեության օրենսդրական հիմնական առանձնահատկությունները Հայաստանում: Ստորև բերված համեմատական աղյուսակում հակիրճ տրված են այդ առանձնահատկությունների բնութագրերը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	Բաժնետիրական ընկերություն
փայատերերի (մասնակիցների) քանակը չի կարող ավել լինել 49 անձից	կարող է ստեղծվել որպես «բաց» ընկերություն (որի բաժնետոմսերը կարող են հրապարակայնորեն վաճառվել ⁸) կամ «փակ» ընկերություն, որի փայատերերի (բաժնետերերի) քանակը չի կարող ավել լինել 50 անձից
բոլոր մասնակիցները ունեն միևնույն իրավունքները կախված իրենց մասնակցության չափից	կարող է թողարկել մեկից ավել դասի բաժնետոմսեր, որոնք իրենց տերերին կարող են տրամադրել տարբեր իրավունքներ
մասնակիցների ռեեստրը վարվում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրում	«փակ» ընկերությունն իր բաժնետերերի ռեեստրը վարում է ինքնուրույն, իսկ «բաց»-ը

⁵ Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններն այս հետազոտությունում չեն ուսումնասիրվել:

⁶ Մինչ այդ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործունեությունը կանոնակարգվում էր 1991 թվականին ընդունված ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ:

⁷ Մինչ այդ բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգվում էր 1996 թվականին ընդունված համապատասխան օրենքով:

⁸ այն բացառություններով, որոնք սահմանված են «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով

	պարտավոր է այն հանձնել Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային
բարձրագույն մարմին է հանդիսանում Ընդհանուր Ժողովը (կարող է կոչվել նաև Մասնակիցների ժողով): Հնարավոր է բաղկացած լինի մեկ մասնակցից	բարձրագույն մարմին է հանդիսանում Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը
ձայների քանակը համապատասխանում է մասնակցի փայաբաժնի մասին հիմնադիր կապիտալում նշվածին	Բոլոր հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն քվեարկելու (առաջնորդվելով՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով): Մի շարք դեպքերում, ձայնի իրավունք չտվող բաժնետոմսերը (օրինակ՝ արտոնյալ բաժնետոմսերը) կարող են բաժնետիրոջը ընձեռել ձայնի իրավունք (օրինակ՝ երբ որոշումը կարող է ազդել արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի գործող իրավունքների վրա)
Տնօրենների Խորհրդի ստեղծումը որոշվում է ինքնուրույն	Տնօրենների Խորհուրդը պարտադիր է, եթե հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի քանակը 50 է կամ ավելի
Տնօրենների Խորհրդի գոյություն դեպքում, գործունեության շրջանակները նախատեսված և հաստատված են ընկերության Կանոնադրությամբ	Տնօրենների Խորհրդի գոյության դեպքում, այս մարմինը կրում է բացառիկ իրավունքներ նախատեսված Բաժնետիրական Ընկերությունների մասին Օրենքով: Տնօրենների Խորհրդի ստեղծման դեպքում, այն պետք է կազմված լինի առնվազն երեք անդամից:
գործադիր մարմնի գոյությունը պարտադիր է: Գործադիր մարմինը կարող է լինել մեկ անձ (գլխավոր տնօրեն, նախագահ և այլն) կամ կոլեգիալ մարմին (կառավարող խորհուրդ, վարչություն և այլն)	գործադիր մարմնի ստեղծումը պարտադիր է: Այս մարմնի մասնակիցների քանակը նախատեսվում է Կանոնադրությամբ
գործադիր մարմինը նշանակվում է Ընդհանուր Ժողովի կողմից	գործադիր մարմինը նշանակվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, եթե այդ իրավասությունը արված չէ Տնօրենների Խորհրդին
միակ հիմնադիրը կարող է հանդիսանալ նաև գլխավոր տնօրեն	բաժնետիրական ընկերության միակ հիմնադիրը կարող է հանդիսանալ նաև գլխավոր տնօրեն
ընկերության վերստուգող հանձնաժողով կամ վերստուգող ունենալը կրում է պարտադիր բնույթ, եթե ընկերությունն ունի 20-ից ավելի մասնակից:	ընկերության վերստուգող հանձնաժողով կամ վերստուգող ունենալը կրում է պարտադիր բնույթ: Ընկերության բաժնետերերի որոշման խնդիրն է ունենալ վերը նշվածներից մեկը: Վերստուգող հանձնաժողովի անդամների քանակը չի կարող լինել երեք հոգուց պակաս
ընկերության աուդիտ կարող է անցկացվել մասնակիցներից մեկի պահանջով:	հասարակ բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով կարող է անցկացվել ընկերության աուդիտ

<p>ընկերության մասնակիցներն ունեն իրենց բաժնեմասերը ընկերության կանոնադիր կապիտալում: Մասնակիցների բաժնեմասերը չեն գրանցվում Արժեթղթերի Հանձնաժողովի կողմից</p>	<p>ընկերության մասնակիցները հանդիսանում են բաժնետոմսերի սեփականատեր: Բաժնետոմսերը պարտադիր գրանցման են ենթակա Արժեթղթերի Հանձնաժողովի կողմից, եթե ընկերությունը կհանդիսանա հաշվետու թողարկող</p>
<p>բոլոր մասնակիցներն ունեն իրենց մասնաբաժիններին համապատասխանող իրավունք և կրում են համապատասխան պատասխանատվություն:</p>	<p>բաժնետոմսերը կարող են բաժանված լինել մի քանի տեսակների (օրինակ՝ հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր): Հասարակ բաժնետոմսերը հիմնականում ունեն քվեարկելու բոլոր իրավունքները Բաժնետերերի Ընդհանուր Ժողովում, այն դեպքում, երբ արտոնյալ բաժնետոմսերը չունեն քվեարկելու իրավունք, բացառապես այն դեպքերի, երբ այդ իրավունքը ապահովվում է ԲԸ մասին օրենքով:</p>
<p>կանոնադրական կապիտալը համապատասխանում է նվազագույն աշխատավարձի հիսունապատիկ չափին (50,000 դրամ)</p>	<p>կանոնադրական կապիտալը ՓԲԸ համար հանդիսանում է նվազագույն աշխատավաճի հարյուրապատիկը (100 հազ. դրամ), իսկ ԲԲԸ համար՝ հազարապատիկը (1 մլն դրամ)</p>
<p>կանոնադրական կապիտալի ավելացում կարող է տեղի ունենալ մասնակիցների երկու երրորդի համաձայնության դեպքում</p>	<p>կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել կամ թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի բարձրացմամբ, կամ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկմամբ: Լրացուցիչ բաժնետոմսեր կարող են թողարկվել միայն եթե բաժնետոմսերը հայտարարված են ընկերության կանոնադրությունում (հայտարարված բաժնետոմսեր): Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման որոշումը կարող է ընդունվել բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ կամ խորհրդի կողմից՝ անդամների միաձայն որոշմամբ</p>
<p>կանոնադրական կապիտալի նվազեցման մասին պարտատերերը պետք է տեղյակ պահվեն: Այս դեպքում պարտատերերը կարող են պահանջել պարտքերի վաղաժամկետ մարում</p>	<p>կանոնադրական կապիտալի նվազեցման մասին պարտատերերը պետք է տեղյակ պահվեն: Այս դեպքում պարտատերերը կարող են պահանջել պարտքերի վաղաժամկետ մարում</p>
<p>մասնաբաժինների սեփականության իրավունքի փոխանցման դեպքում ընկերության մասնակիցներն օգտվում են նախապատվության իրավունքից</p>	<p>ԲԲԸ բաժնետերերը կարող են ազատորեն փոխանցել իրենց բաժնետոմսերը երրորդ անձի: ՓԲԸ բաժնետերերը ինքնաբերաբար օգտվում են նախապատվության իրավունքից</p>
<p>արտաքին ֆինանսավորման անհրաժեշտության դեպքում ընկերության մասնաբաժինները կարող են գրավադրվել: Մակայն ինքնաբերաբար նախապատվության իրավունքը փոխատուի կողմից կարող է դիտվել ոչ գրավիչ:</p>	<p>արտաքին ֆինանսավորման անհրաժեշտության դեպքում ընկերության բաժնետոմսերը կարող են գրավադրվել:</p>

Անհատ ձեռնարկատերերին վերաբերող օրենսդրական հիմնական ակտը՝ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է 2001 թվականի ապրիլի 3-ին: Դրանով սահմանվել են անհատ

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

ձեռնարկատիրոջ իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, նրա գործունեության երաշխիքները և գործունեության դադարեցման պայմանները:

2. Վարչարարական և կիրառական խնդիրները

Եվ այսպես, ինչպիսի՞ վարչարարական և կիրառական խնդիրների է հանդիպում գործարարը ընկերությունների կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին օրենքները գործածելիս:

Ընկերություն հիմնադրելիս կամ որպես անհատ ձեռնարկատեր գործունեություն սկսելիս գործարար միջավայրում առաջացող խնդիրների 35.9 տոկոսը լուծվում է ինքնուրույն՝ ուսումնասիրելով այդ գործընթացի հետ առնչվող իրականական ակտերը: Այնուամենայնիվ, առաջացող խնդիրների 21.9 տոկոսը լուծվում են համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների «օգնությամբ», իսկ 17.6 տոկոսը՝ մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությունների միջոցով: Ընդ որում, հարկ է նշել, որ անհատ ձեռնարկատերերն ավելի հաճախ են դիմում այդ երկու օղակներին քան ընկերությունները, և հիմնականում խնդիրները լուծում են նրանց միջոցով: Իսկ ահա ի տարբերություն ՍՊԸ-ների⁹, ԲԸ-ները¹⁰ ավելի քիչ են դիմում մասնագիտացված խորհրդատուներին և պետական մարմիններին: Այս պատկերը գրեթե նույնն է Երևան քաղաքի և մարզերի կտրվածքով, միայն թե մարզերում համարյա երկու անգամ ավել են դիմում պետական մարմինների օգնությանը (մարզերում, անհատ ձեռնարկատերերը՝ 38.9 տոկոս դեպքերում): Հարկ է նաև նշել, որ օտարաբերյալ ներդրումով ձեռնարկությունները¹¹ գերակայությունը տալիս են մասնագիտացված խորհրդատուներին, իսկ այն կառույցներում, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է, նախապատվությունը կրկին տրվում է պետական մարմիններին: Ընդ որում, այդ երևույթն ակնառու է հատկապես մարզերում, որտեղ յուրաքանչյուր երրորդ դեպքում ծագող խնդիրը լուծում են դիմելով պետական մարմինների օգնությանը: Այն ձեռնարկությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես՝ փորձում են առաջացող խնդիրները լուծել ինքնուրույն: Սակայն, նոր ստեղծված ձեռնարկությունները համեմատած «հների» ավելի շատ են դրանք լուծում մասնագիտացված խորհրդատուների և պետական մարմինների ներկայացուցիչների միջոցով (համապատասխանաբար՝ 19.5 և 25.7 տոկոս): Եթե «հները» խնդիրների ընդամենը 44.9 տոկոսն են լուծում նրանց միջոցով, ապա «նորերը»՝ արդեն 55.1 տոկոսը: Անհրաժեշտ է նաև ընդգծել գործարար միջավայրի կողմից «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոլվածի¹² կիրառման ցածր աստիճանը (այն տատանվում է մեկ տոկոսի սահմանագծում)¹³:

⁹ այստեղ և հետագայում ամբողջ տեքստում՝ «ՍՊԸ» նշանակում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

¹⁰ այստեղ և հետագայում ամբողջ տեքստում՝ «ԲԸ» նշանակում է բաժնետիրական ընկերություն:


¹¹ այստեղ և հետագայում ամբողջ տեքստում՝ «ձեռնարկություն» նշանակում է ընկերություն և/կամ անհատ ձեռնարկատեր: Որոշ դեպքերում ընկերության փոխարեն օգտագործվել է «կազմակերպություն» բառը

¹² այս նորմը հնարավորություն է ընձեռնում ձեռնարկություններին իրավական ակտի որևէ կանոնի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում հայցել պետական մարմնից:

¹³ սույն պարբերությունում օգտագործվել են Ադյուսակներ 7-10-ի տվյալները:


Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր 4. Առարկայական կառուցվածք



- ծանոթանալով իրավական ակտերին
- ձեռնարկության իրավախորհրդատուի միջոցով
- դիմելով պետական մարմնի ներկայացուցչին
- օգտվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածից
- ոչ ֆորմալ հատկացումներով
- դիմելով օժանդակ գրականության օգնությանը
- դիմելով մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությանը
- օգտվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածից
- դատական կարգով
- այլ միջոցներով


Գծապատկեր 5. Առարկայական կառուցվածք



- ծանոթանալով իրավական ակտերին
- ձեռնարկության իրավախորհրդատուի միջոցով
- դիմելով պետական մարմնի ներկայացուցչին
- օգտվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածից
- ոչ ֆորմալ հատկացումներով
- դիմելով օժանդակ գրականության օգնությանը
- դիմելով մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությանը
- օգտվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածից
- դատական կարգով
- այլ միջոցներով

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր 6. Առարկայական կառուցվածք




Ընկերություն ստեղծելիս հիմնադիրներն առնչվում են մի շարք կորպորատիվ փաստաթղթերի և գործողությունների: Պարզվում է, որ հիմնադիր պայմանագրի, կանոնադրության և հիմնադիր ժողովի անցկացման հետ կապված վարչարարական և կիրառական ամենազգալի խնդիրը գործարար միջավայրի համար հանդիսանում է ժամանակի կորուստը (24.4 տոկոս): Ընդ որում պետք է շեշտել, որ վարչարարական բնույթի խնդիրները կազմել են ընդհանուր խնդիրների շուրջ 60 տոկոսը: Երկրորդ տեղը «զբաղեցնում է» պետական մարմիններում սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը: Դրանից «դժգոհ» ձեռնարկությունների 59.2 տոկոսը ՍՊԸ-ներ են, իսկ 40.8 տոկոսը՝ ԲԸ-ներ: Ծագող խնդիրների 12.2 տոկոսը ընկերությունները գտնում են պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայության, իսկ 12.2 տոկոսը՝ օրենքի անմատչելիության մեջ: Ընդ որում ԲԸ-ներն ավելի շատ են «ցանկանում» տեսնել պետության աջակցող մեխանիզմներ: Իսկ ահա խնդիրներ ունեցող ՍՊԸ-ների 72.7 տոկոսը, և ԲԸ-ների 27.3 տոկոսը դրանք լուծում է «անձնական կապերի» միջոցով: Այս պատկերը գրեթե նույնն է Երևան քաղաքի և մարզերի կտրվածքով: Հարկ է նաև նշել, որ օտարերկրյա ներդրումով ընկերություններն ավելի «դժգոհ են» պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի որակից: Այս հարցում նրանք խնդիրների 23.6 տոկոսը կապում են դրա հետ: «Օտարերկրացիները» նաև ավելի մեծ տեղ են տալիս անձնական կապերին: Ի տարբերություն նրանց, այն ընկերությունները, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է, խնդիրների լուծման համար բացառում են անձնական կապերի օգտագործումը: Ընդ որում, ի տարբերություն Երևանի, մարզերում կանայք ավելի շատ են զգում պետության աջակցությունը (16.7 տոկոս) և համեմատաբար գոհ են պետական մարմինների աշխատանքից: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես այս հարցի հետ կապված թիվ առաջին խնդիրը տեսնում են ժամանակի կորուստը: Սակայն, եթե «հները» խնդիրների մեջ 23.8 տոկոսն են դատում ժամանակի կորուստը, ապա «նորերը»՝ 25.5 տոկոսը: Նոր ստեղծված ընկերությունները համեմատաբար «հների» ավելի շատ են դժգոհում պետական մարմինների աշխատանքից (խնդիրների՝

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

համապատասխանաբար 20.8 և 16.5 տոկոսը), սակայն ավելի քիչ ակընկալիքներ ունեն պետական աջակցող մեխանիզմներից¹⁴:

Հարկ է նաև ընդգծել այս հարցի հետ կապված խնդիրների դասակարգման հաջորդականությունն ըստ դրանց ուժգնության աստիճանի¹⁵: Առաջացող խնդիրների շարքում գործարարը հատկապես մատնանշում է ժամանակի կորուստը: Ընդ որում, խնդիրների «սարդոստյանում» այս գործոնը գտնվում է կենտրոնում՝ թե Երևանում, և թե մարզերում, բացառությամբ մարզերում գործող ԲԸ-ների և օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունների, որոնց համար կենտրոնական խնդիր է եղել պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի որակը: Տեղին է նաև նշել, որ խնդիրների ուժգնության աստիճանի դասակարգման ժամանակ նկատվել է ընտրանքի կառուցվածքում ընդգրկված անձանց տեսակետների «համերաշխություն», ինչը վկայում է երևույթների գնահատման օրինաչափության մասին (Գ-ծապատկերներ I-III):

Գ-ծապատկեր 7. Առարկայական կառուցվածք




¹⁴ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 11-15-ի տվյալները:


¹⁵ «Խնդրի ուժգնության աստիճանը» սույն հետազոտության շջանակներում օգտագործվել է որպես ծագող խնդիրների համեմատության մեթոդ: Այն հաշվետվությունում ներկայացված է հռոմեական թվանշանաբ I-XVIII Գ-ծապատկերների միջոցով, որոնցում խնդրի «ժանրությունը» նվազում է 1-ից մինչև 9-ը թվային հերթականությամբ:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր 8. Առարկայական կառուցվածք




Գծապատկեր 9. Առարկայական կառուցվածք




Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր I. Հիմնադիր պայմանագրի և կանոնադրության, ինչպես նաև հիմնադիր ժողովի անցկացման հետ կապված խնդիրների բաշխումը ՀՀ-ում, ըստ ուժգնության




Գծապատկեր II. Հիմնադիր պայմանագրի և կանոնադրության, ինչպես նաև հիմնադիր ժողովի անցկացման հետ կապված խնդիրների բաշխումը Երևանում, ըստ ուժգնության



Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր III. Հիմնադիր պայմանագրի և կանոնադրության, ինչպես նաև հիմնադիր ժողովի անցկացման հետ կապված խնդիրների բաշխումը մարզերում, ըստ ուժգնության



Ընկերություն ստեղծելիս և այնուհետև գործունեության ընթացքում գործարարի հիմնական խնդիրներից մեկը կանոնադրական կապիտալի ձևավորումն է: Այս հարցում առաջացող վարչարարական և կիրառական հնարավոր խնդիրների շարքում պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը համարվել է ամենամեծ խնդիրը (16.9 տոկոս): Չնայած պետք է ընդգծել, որ կանոնադրական կապիտալի ձևավորման ընթացքում առաջացող վարչարարական և կիրառական խնդիրներն հավասարազոր են: Երևան քաղաքում և մարզերում պատկերը մի փոքր այլ է: Եթե Երևանում առավելապես դժգոհում են պետական մարմինների աշխատանքից (21.7 տոկոս), ապա մարզերում՝ օրենքի անմատչելիությունից (16.7 տոկոս): Նմանատիպ կարծիք են ձևավորել նաև այն ընկերությունները, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է, իսկ ահա օտարերկրյա ներդրումով ընկերությունները շեշտել են նաև օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը, ինչպես նաև ժամանակի կորուստը: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես այս հարցի հետ կապված թիվ առաջին խնդիրը տեսնում են պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը (16.9 տոկոս): Սակայն, եթե Երևանում «նորերից» յուրաքանչյուր երրորդը կանոնադրական կապիտալի ձևավորման հարցում կորցնում է ավելորդ ժամանակ, ապա մարզերում կրկին դժգոհում են պետական մարմինների աշխատանքից¹⁶:

Ընկերության փայատիրոջ և անհատ ձեռնարկատիրոջ գործող իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործարար միջավայրի կարծիքն արտահայտվում է նրանում, որ ըստ նրանց դրանք սահմանված են հստակ, սակայն ոչ լիարժեք (33.8 տոկոս): Սակայն, անհատ ձեռնարկատերերը, այն ընկերությունները որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է, ինչպես նաև նրանք, որոնք ստեղծվել են 2002թ.-ից հետո, առավելապես դժվարացել են պատասխանել այդ

¹⁶ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 16-18-ի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

հարցին (համապատասխանաբար՝ 30.0, 40.5 և 16.7 տոկոսը): Երևան քաղաքում և մարզերում պատկերը գրեթե նույնն է, այն բացառությամբ, որ Երևանում ՄՊԸ-ները, «կանայք» և «նոր» գրանցված ձեռնարկությունները գտնում են, որ իրավունքներն ու պարտականությունները սահմանված են հստակ և լիարժեք¹⁷:

Ընկերությունների կողմից արժեթղթեր թողարկելիս ամենախնդրահարույց հարցը եղել է օրենքի կիրառման դժվարությունները և բացերը (26.1 տոկոս): Ընդհանրապես այստեղ գործարար միջավայրը տեսնում է առավելապես օրենքի կիրառական խնդիրներ, դրանք կազմում են ընդհանուր բնույթի խնդիրների 60.9 տոկոսը: Սակայն, Երևանում ընկերություններն արժեթղթեր թողարկելիս կարծում են, որ կորցնում են ավելորդ ժամանակ: Այդ կարծիքին են հատկապես ԲԸ-ները (37.5 տոկոս): Մարզերում գտնում են, որ այս հարցում պետությունը պետք է գործադրի նաև որոշակի աջակցող մեխանիզմներ: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես այս հարցի հետ կապված թիվ առաջին խնդիրը տեսնում են օրենքի կիրառման դժվարությունները և բացերը: Սակայն, «հները» շեշտում են նաև օրենքի կիրառման ծախսատարությունը¹⁸:

Բաժնեմասերի և բաժնետոմսերի օտարման, այդ թվում վաճառքի, նվիրատվության, ժառանգության և նմանատիպ այլ գործարքների դեպքում գործարար միջավայրը թիվ մեկ խնդիրը տեսնում է օրենքի հակասությունների և երկիմաստությունների մեջ (առաջացող խնդիրների 19.4 տոկոսը): Չնայած դրան, նրանք այստեղ գերակայությունը տալիս են վարչարարական բնույթի խնդիրներին: Մասնավորապես, օտարերկրյա ներդրումով ընկերությունները նշում են պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի որակը (40.0 տոկոս): Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են 2002թ.-ից հետո առավելապես զգում են պետության աջակցող մեխանիզմների կարիքը, հատկապես Երևանում: Իսկ մարզերում դժգոհ են պետական մարմինների աշխատանքից¹⁹:

Երբ ըլկերությունները ձեռք են բերում իրենց իսկ թողարկած բաժնեմասերն ու բաժնետոմսերը, կրկին առավելապես հանդիպում են կիրառական բնույթի խնդիրների: Այս հարցի հետ առնչվող խնդիրների 33.3 տոկոսը կապված են օրենքի հակասությունների և երկիմաստությունների հետ: Այդ կարծիքին են հատկապես ԲԸ-ները (37.5 տոկոս): Մինչև 2002թ.-ը ստեղծված ընկերությունները շեշտում են նաև օրենքի հակասություններն ու երկիմաստությունները²⁰:

Կիրառական բնույթի խնդիրները գերակայում են նաև ընկերությունների կողմից բաժնետոմսերի հետզման գործընթացում (խնդիրների 82.3 տոկոսը): Ընդ որում, թե Երևանում, և թե մարզերում խնդրահարույց է օրենքների կիրառման դժվարությունները և բացերը (համապատասխանաբար՝ 33.3 և 40.0 տոկոս): Ընդ որում, այս ցուցանիշը ավելի ազդեցիկ է այն ընկերություններում, որոնք ստեղծվել են 2002թ.-ից հետո (50.0 տոկոս)²¹:

¹⁷ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակ 19-ի տվյալները:

¹⁸ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 20-ի և 21-ի տվյալները:

¹⁹ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 22-24-ի տվյալները:

²⁰ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 25-ի և 26-ի տվյալները:

²¹ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 27-ի և 28-ի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

ՄՊԸ մասնակցին ընկերությունից հեռացնելիս առաջացող խնդիրների բաշխման կառուցվածքում գերակշռում են օրենքի կիրառական հարցերը: Չնայած դրան, խնդիրների 23.5 տոկոսն առնչվում են ժամանակի կորստի հետ: Եթե Երևանում այն համարվում է ամենախնդրահարույցը, ապա մարզերում շեշտում են անձնական կապերի կարևորությունը (33.3 տոկոս): Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002թ.-ը խնդիրների 22.2 տոկոսը կապում են օրենքի կիրառման դժվարությունների և բացերի հետ²²:

Ընկերությունների բաժնետոմսերի և բաժնեմասերի գրավադրման կամ դրանց վրա բռնագանձում տարածելու հետ կապված խնդիրների կառուցվածքում վարչարարական բնույթի խնդիրները կազմում են 53.2 տոկոս: Գործարար միջավայրը հատկապես առանձնացնում է պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը: Այն ընդհանուր խնդիրների կառուցվածքում կազմում է 16.7 տոկոս: Երևանում խնդրահարույց են համարում նաև պետական աջակցող մեխանիզմների բացակայությունը, իսկ ահա մարզերում՝ օրենքի հակասություններն ու երկիմաստությունները: Օտարերկրյա ներդրումով ընկերությունները այս հարցին առնչվող խնդիրների 42.9 տոկոսը կապում են վերջինիս հետ: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են 2002թ.-ից հետո խորահարույց են համարում ժամանակի կորուստը (21.1 տոկոս), իսկ «հները» տեսնում են նաև օրենքի կիրառման դժվարություններ և բացեր (12.1 տոկոս)²³:

Շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման հետ կապված խնդիրների կառուցվածքում գործարար միջավայրը հավասարապես տեսնում է խնդիրներ՝ օրենքի հակասությունների և երկիմաստությունների, ինչպես նաև կիրառման դժվարությունների ու բացերի հետ (32.8 տոկոս): Սակայն, եթե կին հիմնադիր-ղեկավարով ընկերությունները ավելի մեծ խնդիրներ են ունենում առաջինի հետ (50.0 տոկոս), ապա օտարերկրյա ներդրումով ընկերությունները՝ երկրորդ երկույթի հետ (57.1 տոկոս): Հարկ է նշել, որ 2002թ.-ից հետո ստեղծված ընկերություններն առավելապես «բողոքում են» օրենքի կիրառման ծախսատարությունից (33.3 տոկոս), հատկապես մարզերում: Իսկ ահա «հին» ընկերությունները տեսնում են օրենքի հակասությունները և երկիմաստությունները (36.5 տոկոս)²⁴:

Ընկերությունների կորպորատիվ կառավարմանն առնչվող խնդիրների շարքում առանձնանում են օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը, ինչպես նաև դրա կիրառման ծախսատարությունը: Եթե ՄՊԸ-ների մոտ գերակշռում է առաջին խնդիրը (41.9 տոկոս), ապա ԲԸ-ներն առանձնացնում են երկրորդը (36.0 տոկոս): Նույնատիպ պատկեր է արձանագրվել նաև Երևան քաղաքում և մարզերում: Իսկ այն ընկերությունները, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է, յուրաքանչյուր երկրորդ խնդիրը առնչվում է օրենքի հակասությունների և երկիմաստությունների հետ: Պետք է նշել, որ եթե մինչև 2002թ.-ը ստեղծված ընկերությունները կառավարմանն առնչվող խնդիրների շարքում շեշտում են օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը (43.8 տոկոս), ապա «նորերը» համարում են, որը առաջացող խնդիրները հիմնականում կապված են օրենքի հակասությունների և երկիմաստությունների հետ (29.2 տոկոս)²⁵:

²² սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 29-ի և 30-ի տվյալները:

²³ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 31-33-ի տվյալները:

²⁴ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 34-36-ի տվյալները:

²⁵ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 37-39-ի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Ընկերության վերակազմակերպման հարցում առաջացող վարչարարական և կիրառական հնարավոր խնդիրների շարքում ժամանակի կորուստը համարվել է ամենամեծ խնդիրը (19.8 տոկոս): Հարկ է ընդգծել, որ այդ գործընթացում առաջացող խնդիրների կառուցվածքում գերակշռում են վարչարարական բնույթի խնդիրները (56.4 տոկոս): Երևան քաղաքում և մարզերում որպես խնդիր շեշտում են նաև պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը, առանձնացնելով նաև ոչ ֆորմալ հատուցումների խնդիրը: Իսկ ահա օտարերկրյա ներդրումով ընկերությունները որպես գերակա խնդիր ընդգծել են օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը (21.7 տոկոս): Բայց ահա այն ընկերություններում, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է կրկին շեշտվում է ժամանակի կորուստը և սպասարկման ու պրոֆեսիոնալիզմի մակարդակը: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես այս հարցի հետ կապված թիվ առաջին խնդիրը տեսնում են ժամանակի կորուստը (19.8 տոկոս): Սակայն, եթե Երևանում «նորերը» վերակազմակերպում անցնելիս յուրաքանչյուր չորրորդ խնդիրը կապում են ժամանակի ավելորդ կորստի հետ, ապա մարզերում կրկին դժգոհում են պետական մարմինների աշխատանքից²⁶:

Ձեռնարկությունների մասնակիցների միջև ծագող տարաձայնությունների և վեճերի լուծման ժամանակ գործարար միջավայրը հիմնականում օգտագործում է արտադատարանական եղանակը: Հարկ է նշել, որ 92.3 տոկոս դեպքերում խնդիրները լուծվում են արտադատարանական կարգով: Հարկ է նաև նշել, որ Երևանում գործող այն ընկերություններում, որտեղ առկա է օտարերկրյա մասնակցություն ավելի հաճախ են խնդիրները լուծում դատական կարգով: Նույնն է պատկերը նաև այն ընկերություններում, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես այս հարցի հետ կապված թիվ առաջին լուծման տարբերակը տեսնում են արտադատարանական եղանակը: Սակայն, «նորերն» ավելի հաճախ են դիմում դատարանական կարգով խնդիրների լուծմանը²⁷:

Ձեռնարկության լուծարման գործընթացում ծագող վարչարարական և կիրառական ամենազգալի խնդիրը գործարար միջավայրի համար հանդիսանում է աջակցող մեխանիզմների բացակայությունը (14.6 տոկոս): Ընդ որում հարկ է շեշտել, որ վարչարարական բնույթի խնդիրները կազմել են ընդհանուր խնդիրների շուրջ 60 տոկոսը: Երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար «զբաղեցնում են» օրենքի կիրառման դժվարությունները և ժամանակի կորուստը: Առաջինից «դժգոհ» են մարզերում (21.2 տոկոս), իսկ երկրորդից՝ Երևան քաղաքում (14.4 տոկոս): Հարկ է նաև նշել, որ այն ընկերությունները, որտեղ հիմնադիրը կամ ղեկավարը կին է, ծագող խնդիրներն առավելապես կապում են պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակի հետ (13.5 տոկոս): Ընդ որում, ի տարբերություն մարզերի, Երևանում կանայք ավելի շատ են հանդիպում պետական մարմինների գործողությունների բողոքարկման ընթացակարգային բարդությունների: Այն ընկերությունները, որոնք ստեղծվել են մինչև 2002 թվականը և 2002թ.-ից հետո, նույնպես այս հարցի հետ կապված թիվ առաջին խնդիրը տեսնում են աջակցող մեխանիզմների բացակայության մեջ: Սակայն, եթե «հների» համար գերակա խնդիրների մեջ են դասվում ժամանակի կորուստը և օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը, ապա «նորերը» դժգոհում են աջակցող մեխանիզմների բացակայությունից: Նոր ստեղծված ընկերությունները համեմատած «հների» ավելի շատ են դժգոհում պետական մարմինների աշխատանքից²⁸:

²⁶ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 40-42-ի տվյալները:

²⁷ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակ 43-ի տվյալները:

²⁸ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակներ 44-46-ի տվյալները:

Ձեռնարկությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության մեջ ակնհայտ հակասությունների առկայության աստիճանը գնահատելիս գործարար միջավայրի ներկայացուցիչների գերակշռող հատվածը դժվարացել է պատասխանել: Այս հարցում համեմատաբար «ակտիվ» են ԲԸ-ները, որոնց 2.1 տոկոսը տեսնում են ակնհայտ հակասություններ օրենսդրության մեջ, և օտարերկրյա ներդրումով ընկերությունները, որոնց 5 տոկոսն են արտահայտել նման կարծիք²⁹:

Միաժամանակ, տեղին է ուշադրություն դարձնել մի քանի առանձնահատուկ աղյուսակների կառուցվածքին, որոնցում բնութագրվում են հետազոտության արդյունքները որոշակի հայտանիշների տեսանկյունից. կին և տղամարդ, օտարերկրյա և տեղական ներդրող, «հին» ու «նոր» հիմնադրված ձեռնարկություններ և այլն (Աղյուսակներ 150-155):

3. Հետազոտության հիմնական արդյունքները

Ընկերություն հիմնադրելիս կամ որպես անհատ ձեռնարկատեր գործունեություն սկսելիս գործարար միջավայրում առաջացող խնդիրները հիմնականում լուծվում են «խոհրդատուների» միջոցով: Ընդ որում պետք է նշել, որ այս հարցում գործարար միջավայրը համագործակցության ավելի մեծ «ռեսուրս» է տեսնում պետական մարմիններում: Այս փաստը նկատելի է հատկապես նոր ստեղծված ձեռնարկությունների մոտ: Նրանք՝ համեմատած «հների», ավելի շատ են խնդիրները լուծում մասնագիտացված խորհրդատուների և պետական մարմինների ներկայացուցիչների միջոցով:

Հիմնադիր պայմանագրի, կանոնադրության և հիմնադիր ժողովի անցկացման հետ կապված վարչարարական և կիրառական ամենագլխի խնդիրը գործարար միջավայրի համար հանդիսանում է ժամանակի կորուստը: Այն սերտորեն առնչվում է վարչարարական բնույթի խնդիրների հետ, որոնք կազմում են ընդհանուր խնդիրների շուրջ 60 տոկոսը: Իսկ այստեղ գործարարարը «դժգոհում» է պետական մարմիններում սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակից:

Այս հարցում առաջացող առաջին երեք խնդիրներն են եղել՝

- ժամանակի կորուստը
- սպասարկման և պրոֆեսիոնալիզմի որակը
- պետության աջակցող մեխանիզմների բացակայություն

Մարզերում գործող ԲԸ-ների և օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունների համար, այնուամենայնիվ, կենտրոնական խնդիր է եղել պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի որակը:

Կանոնադրական կապիտալի ձևավորման հարցում առաջացող վարչարարական և կիրառական հնարավոր խնդիրների շարքում պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը համարվել է ամենամեծ խնդիրը:

Ընկերության փայտափրոջ և անհատ ձեռնարկատիրոջ գործող իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործարար միջավայրի կարծիքն արտահայտվում է նրանում, որ ըստ նրանց դրանք սահմանված են հստակ, սակայն ոչ լիարժեք:

²⁹ սույն պարբերությունում օգտագործվել են Աղյուսակ 47-ի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Ընկերությունների կողմից արժեթղթեր թողարկելիս ամենախնդրահարույց հարցը եղել է օրենքի կիրառման դժվարությունները և բացերը: Բաժնեմասերի և բաժնետոմսերի օտարման, այդ թվում վաճառքի, նվիրատվության, ժառանգության և նմանատիպ այլ գործարքների դեպքում գործարար միջավայրը թիվ մեկ խնդիրը տեսնում է օրենքի հակասությունների և երկիմաստությունների մեջ: ՄՊԸ մասնակցին ընկերությունից հեռացնելիս առաջացող խնդիրների բաշխման կառուցվածքում գերակշռում է ժամանակի կորստի գործոնը:

Ընկերությունների բաժնետոմսերի և բաժնեմասերի գրավադրման կամ դրանց վրա բռնագանձում տարածելու հետ կապված խնդիրների կառուցվածքում վարչարարական բնույթի խնդիրները կազմում են 53.2 տոկոս: Գործարար միջավայրը հատկապես առանձնացնում է պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը:

Շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման հետ կապված խնդիրների կառուցվածքում գործարար միջավայրը հավասարապես տեսնում է խնդիրներ՝ օրենքի հակասությունների և երկիմաստությունների, ինչպես նաև կիրառման դժվարությունների ու բացերի հետ:

Ընկերությունների կորպորատիվ կառավարմանն առնչվող խնդիրների շարքում առանձնանում են օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը, ինչպես նաև դրա կիրառման ծախսատարությունը: Ընկերության վերակազմակերպման հարցում առաջացող վարչարարական և կիրառական հնարավոր խնդիրների շարքում ժամանակի կորուստը համարվել է ամենամեծ խնդիրը:

Ձեռնարկությունների մասնակիցների միջև ծագող տարաձայնությունների և վեճերի լուծման ժամանակ գործարար միջավայրը հիմնականում օգտագործում է արտադատարանական եղանակը:

Ձեռնարկության լուծարման գործընթացում ծագող վարչարարական և կիրառական ամենագլխի խնդիրը գործարար միջավայրի համար հանդիսանում է աջակցող մեխանիզմների բացակայությունը: Ընդ որում պետք է շեշտել, որ վարչարարական բնույթի խնդիրները կազմել են ընդհանուր խնդիրների շուրջ 60 տոկոսը: Ձեռնարկությունները կարծում են, որ այստեղ ավելի մեծ խնդիրներ են ծագում, քան գրանցման գործընթացում, հատկապես հարկային մարմինների հետ հարաբերություններում:

ՄԱՍ 3. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԳՐԱՆՑՈՒՄԸ

1. Գրանցման իրավական ընթացակարգը

Հետազոտության այս հատվածում ներկայացվում է Հայաստանում ձեռնարկությունների պետական գրանցման ընթացակարգի ընդհանուր իրավական պատկերը, վերջինիս առնչությամբ ծագող խնդիրները (կիրառական և վարչարարական), ինչպես նաև հետազոտության հիմնական արդյունքները:

Ձեռնարկությունների պետական գրանցման վերաբերյալ օրենսդրությունը Հայաստանում ներառում է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքները, այլ օրենքներն ու իրավական ակտերը: Անհրաժեշտ է նշել, որ ձեռնարկությունների պետական գրանցման մասին օրենսդրությունը Հայաստանում ավելի քան տասն տարիների ընթացքում անընդհատ փոփոխվել, լրամշակվել և նորացվել է: Հետևաբար անդրադառնալով պետական գրանցման խնդրին, օրենսդրական փոփոխությունների ժամանակագրությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Իրավական ակտը	Ուժի մեջ է մտել	Ուժը կորցրել է / գործում է	Հակիրճ բովանդակությունը
«Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի (Ձեռնարկությունների պետական գրանցումը)	մարտ 1992թ.	ուժը կորցրել է հունվար 1999թ.	ՀՀ տարածքում գործող ձեռնարկությունները, ինչպես նաև բաժանմունքները, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված լինեն ՀՀ պետական լիազորված մարմնի կողմից: Չգրանցված ձեռնարկությունների գործունեությունը արգելվում է և դրանց նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցները:
«Ձեռնարկությունների պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված («Ձեռնարկությունների պետական գրանցում» հասկացությունը)	սեպտեմբեր 1993թ.	ուժը կորցրել է օգոստոս 2001թ.	Ձեռնարկությունների պետական գրանցումը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների իրավունակության ճանաչումն է պետության կողմից: Ձեռնարկության իրավունակությունը, ինչպես նաև անհատ ձեռներեցի իրավունքները ծագում են պետական գրանցման պահից: Ձեռնարկությունը կամ անհատ ձեռներեցը համարվում են գրանցված պետական գրանցման վկայական ստանալու պահից:
«Անհատ ձեռներեցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված	դեկտեմբեր 1993թ.	ուժը կորցրել է ապրիլ 2001թ.	Անհատ ձեռներեցին գրանցում է համապատասխան մարմինը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված	ապրիլ 1996թ.	ուժը կորցրել է դեկտեմբեր 2001թ.	Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
ՀՀ ԶՕ 56-րդ հոդված (Իրավաբանական անձանց պետական գրանցումը), ՀՀ ԶՕ 26-րդ հոդված (Քաղաքացու ձեռնարկատիրական գործունեությունը)	հունվար 1999թ.	գործում է	Իրավաբանական անձը, օրենքով սահմանված կարգով, ենթակա է պետական գրանցման: Պետական գրանցման համար տվյալները՝ ներառյալ առևտրային կազմակերպությունների ֆիրմային անվանումը, գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում, որը բաց է համընդհանուր ծանոթացման համար: Իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից: Քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից, իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:
«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված	ապրիլ 2001	գործում է	Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունը և գործունակությունը ծագում են նրա պետական գրանցման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության և գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու պահից:
«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված	ապրիլ 2001թ.	գործում է	Պետական գրանցումն ստեղծվող իրավաբանական անձի իրավունակության ճանաչումն է պետության կողմից: Իրավաբանական անձը ստեղծված է համարվում պետական գրանցման պահից, իսկ նրա գործունեությունը դադարած՝ գործունեության դադարման պետական գրանցման պահից: Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է գրանցված իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում սույն օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը կատարելու պահից: Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը հավաստվում է իրավաբանական անձանց գրանցող մարմնի՝ պետական ռեգիստրի, տարածքային ստորաբաժանման կողմից համապատասխան վկայականով:
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք	դեկտեմբեր 2001թ.	գործում է	Բաժնետիրական ընկերությունը ստեղծված է համարվում պետական գրանցման պահից:
«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք	դեկտեմբեր 2001թ.	գործում է	Ընկերությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Ինչպես հետևում է շուկայական տնտեսության սկզբունքներից, որոնք իրենց հիմնավորումն են գտել օրենսդրության մեջ, կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) ստեղծվում է իր հիմնադիրների (ֆիզիկական անձի) կամքով: Ստեղծվելուց և գրանցվելուց հետո կազմակերպությունը ձեռք է բերում իրավունակություն և մասնակցում է գույքային շրջանառությանը: Հարց է ծագում. ինչո՞վ բացատրել կազմակերպության պարտադիր պետական գրանցման պահանջը, եթե նրանք ստեղծվում են իրենց հիմնադիրների կամքով: Նման պահանջը պայմանավորված է գույքային շրջանառության մյուս մասնակիցների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Պետությունը ելնելով այդ մասնակիցների, ինչպես նաև հանրության շահերից, գրանցման միջոցով վերահսկում է իրավաբանական անձանց ստեղծման օրինականությունը, որով և պայմանավորված է իրավաբանական անձանց պարտադիր պետական գրանցման պահանջը: Քանի որ իրավաբանական անձն իրավունակություն և գործունակություն է ձեռք բերում պետական գրանցման պահից, ապա իրավաբանական անձանց ստեղծման ընթացակարգը կրում է «գրանցման եղանակ» անվանումը, որի պարագայում պետությունը ոչ թե թույլատրում է, այլ իրականացնում է միայն իրավաբանական անձի պետական գրանցումը:

Առևտրային կազմակերպության գրանցման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդական քայլերի միջոցով.

1. Ֆիրմային անվանման գրանցում
 - ֆիրմային անվանման գրանցման համար պետական տուրքի վճարում
 - ֆիրմային անվանման գրանցման դիմումի լրացում և հանձնում պետական ռեգիստրի տարածքային բաժանմունք
2. Պետական գրանցում
 - պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում և հաստատում հիմնադիր ժողովում
 - պետական գրանցման համար պետական տուրքի վճարում
 - պետական գրանցման դիմումի լրացում և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում պետական ռեգիստրի տարածքային բաժանմունք
 - պետական գրանցում և պետական գրանցման վկայականի ու կանոնադրության օրինակների ստացում պետական ռեգիստրի տարածքային բաժանմունքից
3. Հաշվառում տարածքային հարկային տեսչությունում և ՀՎՀՀ-ի ստացում՝ պետական գրանցումից մեկ ամսվա ընթացքում
4. Հաշվառում սոցիալական ապահովագրության տարածքային մարմնում՝ պետական գրանցումից մեկ ամսվա ընթացքում
5. Կնիքի թույլտվություն և ձեռքբերում
 - կնիքի թույլտվություն ստանալու համար պետական տուրքի վճարում
 - կնիքի թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում ՀՀ Ոստիկանություն
 - կնիքի թույլտվության ստացում
 - կնիքի պատրաստման պատվերի ձևակերպում (պատրաստման ժամկետը՝ ըստ սակագների 1-30 օր)
 - պատրաստի կնիքի ստացում
6. Ղեկավար անձանց ստորագրությունների հաստատում³⁰
7. Բանկում հաշվարկային հաշվի բացում

³⁰ Այստեղ նկատի է առնվում բանկում (և հարկային մարմիններում) հատուկ ձևաթղթերի վրա ձեռնարկության ղեկավարների ստորագրությունների նմուշների վերցնելը (հաշվառելը):

8. Լիցենզիայի ստացում (ըստ անհրաժեշտության)
9. Գործունեության սկիզբ

Ինչպես արդեն նշվել է, ներկայացվող մասում հիմնականում քննարկվելու են նշված գործընթացների առնչությամբ ծագող հիմնախնդիրները, իսկ հաշվի առնելով օգտագործվող իրավական հասկացությունները, նպատակահարմար ենք գտնում տալ դրանց օրենսդրական սահմանումների բացատրությունները:

Ֆիրմային անվանում. Առևտրային իրավաբանական անձը պետք է ունենա ֆիրմային անվանում: Ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո իրավաբանական անձն իրականացնում է իր գործունեությունը և զանազանվում այլ իրավաբանական անձանցից: ՀՀ-ում ֆիրմային անվանման իրավական պահպանությունն իրականացվում է «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆիրմային անվանման գրանցման հիման վրա և առանց գրանցման՝ միջազգային պայմանագրերի հիման վրա: Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքն ուժի մեջ է մտնում իրավաբանական անձի պետական գրանցման օրվանից կամ գրանցված իրավաբանական անձի ֆիրմային անվանման փոփոխության մասին իրավաբանական անձանց գրանցամատյանում գրառում կատարելու օրվանից և գործում է նրանց գործունեության ողջ ընթացքում: Իրավաբանական անձը, որի ֆիրմային անվանումը գրանցված է, ունի դրա օգտագործման բացառիկ իրավունքը: Ֆիրմային անվանման պետական գրանցման փաստը, ինչպես նաև իրավաբանական անձի կողմից դրա օգտագործման բացառիկ իրավունքը հաստատվում են ֆիրմային անվանման գրանցման վկայագրով:

Տորքեր. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման, իրավաբանական անձանց կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցման, կորցրած պետական գրանցման վկայականի փոխարեն նորը տալու, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանի տեղեկություններից օգտվելու համար գանձվում է տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով:

Մասնաճյուղեր (ներկայացուցչություններ). Իրավաբանական անձը հաճախ գործարքներ է կատարում նաև իր մշտական գտնվելու (գործելու) վայրից դուրս: Եթե այդ գործարքները կրում են սիստեմատիկ բնույթ, ապա իրավաբանական անձն այդ նպատակով կարող է այլ վայրում ստեղծել ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում է դրանց պաշտպանությունը: Մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրա մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները: Ներկայացուցչությունները և մասնաճյուղերը իրավաբանական անձինք չեն և գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա: Հետևաբար ներկայացուցչությունները և մասնաճյուղերը գույքային շրջանառությանը մասնակցում են ոչ թե իրենց անունից, այլ իրավաբանական անձի անունից և ի շահ վերջինիս:

Իրավաբանական անձանց մասին տեղեկությունների հետ ծանոթագումբ. Իրավաբանական անձի գրանցման դեպքում պետական գրանցման համար տվյալները՝ ներառյալ առևտրային կազմակերպությունների ֆիրմային անվանումը, գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում, որը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

2. Գրանցման վարչարարական և կիրառական խնդիրները

Փորձենք ներկայացնել այն խնդիրները (ինչպես վարչարարական, այնպես էլ կիրառական), որոնց, համաձայն հետազոտության հարցաթերթերի արդյունքների, բախվում են Հայաստանում իրենց սեփական գործը նախաձեռնող անձինք պետական գրանցման տարբեր փուլերում:

Խնդիրների հենց առաջին խումբը ծագում է պետական գրանցման փուլում: Եթե դասակարգենք այդ խնդիրները՝ ըստ վարչարարական և կիրառական բնույթի, ապա դրանցում առավել մեծ նշանակություն ունի վարչարարական բնույթի խնդիրներից **ժամանակի կորուստը**: Դիտարկելով այն տարբեր տեսանկյուններից՝ ըստ ձեռնարկությունների կազմակերպա-իրավական ձևերի, օտարերկրյա ներդրողի, կին հիմնադիր/ղեկավարի, ստեղծման ժամանակահատվածի, կարելի է նշել հետևյալ ընդհանուր օրինաչությունը. ժամանակը պահպանում է իր խնդրահարույց բնույթը բոլոր դեպքերում: Միաժամանակ այն ըստ դիտարկվող տեսանկյունների դրսևորում է բարդության տարբեր աստիճանները: Այսպես, ժամանակի կորուստի խնդիրն առավել բարդանում է ԲԸ-ի գրանցման ժամանակ, որը հատուկ է թե Երևանին, թե մարզերին: Իհարկե մարզերում խնդիրը ԲԸ-ի համար ունի ավելի փոքր նշանակություն (34,1%), քան Երևանում (40%): Սակայն սա չի փոխում ընդհանուր պատկերը: Իրավիճակը գրեթե նույնն է հիմնադիր/ղեկավարի տեսանկյունից (27,5%): Միայն թե մարզերում խնդրի նշանակությունը փոքր է (28.3%), ի համեմատություն մարզերում գործող կին ղեկավար/հիմնադիր ունեցող կազմակերպությունների մոտ խնդրի նշանակության (33,3%): Փաստորեն թե Երևանում, թե մարզերում կանայք ավելի շատ են ժամանակ ծախսում գրանցման գործընթացի վրա, քան տղամարդիկ: Ինչ վերաբերում է խնդրի նշանակությանը՝ պայմանավորված կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) ստեղծման տարով, ապա այն բարձր է 2002թ. հետո ստեղծվածների համար՝ ի հաշիվ մարզերի (28.4%), քանի որ Երևանում խնդրի նշանակությունը նվազել է 1.1 տոկոսային կետով³¹:

Վարչարարական խնդիրներում հաջորդ տեղը զբաղեցնում է **սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը**: Արդեն այս խնդրի ազդեցության տեսանկյունից ԲԸ-ներն իրենց տեղը զիջել են ՍՊԸ-ներին թե Երևանում և թե մարզերում: Խնդրի առավել մեծ տեսակարար կշիռ է արձանագրվել օտարերկրյա ներդրումով կազմակերպությունների մոտ, հատկապես Երևանում (20,0%), իսկ մարզերում իրավիճակը փոխվել է ի վնաս կին ղեկավար/հիմնադիրների (21,4%): Ստեղծման տարով պայմանավորված դիտարկվող խնդիրը սրություն է ստացել Երևանում 2002թ. հետո ստեղծվածների համար (23,4%, իսկ 18,8% մինչև 2002թ. ստեղծվածների համար), քանի որ մարզերում խնդիրը գրեթե պահպանել է իր կայուն նշանակությունը³²:

Բնականաբար սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակի խնդրի առկայությունը պետք է բարձրացնեն **աջակցող մեխանիզմների բացակայության** նշանակությունը, ինչն էլ հենց ապացուցում են հարցման արդյունքները: Հետևաբար իրենց նշանակությամբ վարչարարական խնդիրների մեջ երրորդ տեղում է աջակցող մեխանիզմների բացակայությունը: Ի դեպ նշված խնդիրն իր ցայտուն արտահայտությունն է գտել Երևանում կին ղեկավար/հիմնադիրների մոտ՝ կազմելով 15,1% (ընդամենը ՀՀ-ում՝ 12.6%): Կազմակերպա-իրավական ձևերի տեսանկյունից աջակցող մեխանիզմների պակասը սրվում է ԱԶ-ի մոտ, ընդ որում՝ թե Երևանում և թե մարզերում³³: Ինչ

³¹ Սույն պարբերությունում օգտագործվել են 48, 50, 52 աղյուսակների տվյալները:

³² Սույն պարբերությունում օգտագործվել են 48, 50, 52 աղյուսակների տվյալները:

³³ Սույն պարբերությունում օգտագործվել են 48, 50, 52 աղյուսակների տվյալները:


Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

վերաբերում է կիրառական խնդիրներին, ապա ընդհանուր առմամբ դրանց կարելի է վերագրել հետևյալ վարկանիշը. 1. օրենքի կիրառման ծախսատարություն, 2. օրենքի կիրառման դժվարություններ ու բացեր, 3. օրենքի անմատչելիություն, 4. օրենքի հակասություններ և երկիմաստություններ:

Միաժամանակ ըստ տարբեր տեսանկյունների վերլուծություն իրականացնելիս ներկայացված վարկանիշում նշված խնդիրները փոխում են իրենց տեղը: Այսպես, ԱԶ-ի համար օրենքի կիրառման ծախսատարությունը և օրենքի անմատչելիությունը թե Երևանում, թե մարզերում ունեն գրեթե նույն նշանակությունը: Մարզերում թե օտարերկրյա ներդրումով և թե կին ղեկավար/հիմնադիր ունեցող ձեռնարկությունների համար աճում է օրենքի անմատչելիության խնդրի նշանակությունը, այն դեպքում, երբ Երևանում օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունները մնան խնդրի հետ չեն առնչվում: Միաժամանակ օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունների մոտ առանձնահատուկ նշանակություն է ստանում օրենքի կիրառման դժվարությունների ու բացերի խնդիրը (14,3%)³⁴:

Ինչ վերաբերում է հարցման մասնակիցների կողմից գրանցման ընթացքում ծագող խնդիրների ուժգնության աստիճանին, ՀՀ-ում հաստատուն կերպով առաջին տեղում է ժամանակի կորուստը: Գծապատկերներ IV-VI վկայում են, որ այս խնդիրը բոլոր հարցվածների ուշադրության կենտրոնում է, բացառությամբ մարզերում գործող օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունների, որոնց համար պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակն է հանդիսացել ամենամեծ խնդիրը: Իսկ վերջինս, ուժգնության իր աստիճանով, ընդհանուր առմամբ երկրորդ «կենտրոնամետ» խնդիրն է: Երրորդ հաստատուն հորիզոնականը «զբաղեցնում» է պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայությունը³⁵:

Գծապատկեր IV. Ձեռնարկություն գրանցելիս (որպես ԱԶ գրանցվելիս) առաջացող խնդիրների բաշխումը ՀՀ-ում, ըստ ուժգնության




³⁴ Մույն պարբերությունում օգտագործվել են 48, 50, 52 աղյուսակների տվյալները:


³⁵ Մույն պարբերությունում օգտագործվել են 97 աղյուսակի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր V. Ձեռնարկություն գրանցելիս (որպես ԱԶ գրանցվելիս) առաջացող խնդիրների բաշխումն Երևանում, ըստ ուժգնության



Գծապատկեր VI. Ձեռնարկություն գրանցելիս (որպես ԱԶ գրանցվելիս) առաջացող խնդիրների բաշխումը մարզերում, ըստ ուժգնության




Այն որ կազմակերպություն գրանցելիս (որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելիս) առաջանում են խնդիրներ, կասկածների տեղիք չի տալիս: Առանձին հարց է, թե ինչպես են կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը լուծում այդ խնդիրները. հակված են արդյո՞ք դիմել խորհրդատվական ծառայության/իրավաբանի օգնությանը, թե գրանցման հետ կապված խնդիրները կարծում են, որ կարող են լուծել ինքնուրույնաբար: Ինչպես վկայում են հարցման արդյունքները, ընդհանուր օրինաչափությունը կայանում է նրանում, որ կազմակերպությունները (անհատ

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

ձեռնարկատերերը) ներկայումս այն կարծիքին են, որ պետական գրանցման իրենց խնդիրները կարելի է լուծել ինքնուրույնաբար: Տոկոսային շեղումներ են դիտարկվում կոնկրետ կազմակերպա-իրավական տեսակով, հիմնադրով, ստեղծման ժամկետով պայմանավորված: Այսպես, եթե Երևանում ԱԶ-ը գրանցման գործընթացում մտածում է կարող է ցուցաբերել ինքնուրույնության բարձր մակարդակ (63,3%), ապա մարզերում զգալի է խորհրդատուի մասնակցության ակնհայտիքը (52%), որը բոլոր տեսակայիններից խորհրդատուների հնարավոր մասնակցության ամենամեծ աստիճանն է: Առավել հետաքրքրական է այն, որ ինքնուրույնության բավականին բարձր մակարդակի «հակվածություն» ունեն կին ղեկավար/հիմնադիրով կազմակերպությունները, հատկապես Երևանում (73.9%): Թերևս, դրա վրա ազդել է այն փաստը, որ հենց այս կազմակերպություններում առավել շոշափելի էին գրանցման այնպիսի խնդիրները, ինչպիսիք են ժամանակի կորուստը, աջակցող մեխանիզմների բացակայությունը: Ինչ վերաբերում է ըստ ստեղծման ժամանակահատվածի գործող ձեռնարկությունների տվյալներին, ապա վերջիններիս ուսումնասիրությունը նույնպես վկայում է կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) մոտ ինքնուրույնության միտումների ամրապնդման մասին: Այսպես, եթե մինչև 2002թ. գրանցվածների 44%-ն է «մտադիր դիմել» խորհրդատուի, ապա 2002թ. և հետո՝ գրանցվածների արդեն 40.6%-ը³⁶: Այնուամենայնիվ, ենթադրվում է, որ ձեռնարկության գրանցման գործընթացն ինքնուրույն իրականացնելիս գործարարն ամեն դեպքում չի բացառում այլ անձանց կողմից օժանդակություն ստանալու հնարավորությունը, որը որոշակիորեն կարող է նվազեցնել գործարարի ինքնուրույնության աստիճանը:

Գրանցման ժամանակ առանց խորհրդատուի գործելու հանգամանքը վկայում է, որ կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը) պետք է ունենան գիտելիքների որոշակի մակարդակ, այսինքն իրազեկ լինեն գրանցման գործընթացից: Հետևաբար հետաքրքիր է հարցման մասնակից կազմակերպությունների կողմից սեփական գիտելիքների գնահատումը:

Գծապատկեր 10: Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գրանցման համար սահմանված կարգին իրազեկ լինելու աստիճանը



Փաստորեն հարցվածների գերակշիռ մեծամասնությունն իր գիտելիքները համարում է բավարար սեփական գործը գրանցելու համար: Սակայն ինչպես վկայում են հարցման արդյունքները խորհրդատվական ծառայությունից օգտվողների թվի վերաբերյալ, իրենց գիտելիքներին կամ իրազեկությանը բավարար գնահատական տվողների մի մասը ևս օգտվում է խորհրդատվական օգնությունից³⁷:

Գնահատելով գրանցման քայլերի բնույթը,

հարցման տվյալներով Երևանում ՍՊԸ-ի համար խնդրահարույց քայլ է գնահատվել ֆիրմային անվանման գրանցումը՝ կազմելով 23,5%, իսկ ԲԸ-ի և ԱԶ-ի համար՝ գրանցումը պետական ռեգիստրում (համապատասխանաբար 22,3% և 18,8%), մարզերում ԲԸ-ի համար իրավիճակը փոխվում է, և նրանք ավելի շատ դժգոհում են կնիքի թույլտվությունը ստանալու խնդրից, ի դեպ նշված խնդիրը բավական մեծ նշանակություն ունի նաև մարզերում գրանցված ՍՊԸ-ի և ԱԶ-ի համար՝ խնդիրների վարկանիշում զբաղեցնելով 2-րդ հորիզոնականը և համապատասխանաբար կազմելով

³⁶ Սույն պարբերությունում օգտագործվել են 54 աղյուսակի տվյալները:


³⁷ Սույն պարբերությունում օգտագործվել են 57 աղյուսակի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

17,5% և 14,5%: Ինչ վերաբերում է օտարերկրյա ներդրումով և կին հիմնադիր/ղեկավար ունեցող կազմակերպություններին, ապա վերջիններիս մոտ էլ Երևանում դժվարության ուժգնության աստիճանով առանձնանում է ֆիրմային անվանման գրանցումը, չնայած կին հիմնադիր/ղեկավարները բարձր գնահատական են տվել նաև կնիքի պատվիրմանն ու ձեռքբերմանը (16,2%): Միաժամանակ մարզերում թե օտարերկրյա ներդրումով և թե կին հիմնադիր/ղեկավար ունեցող կազմակերպությունների համար գրանցման բոլոր քայլերն էլ ունեցել են բարդության զգալի աստիճան: Կանանց համար 10 սահմանային (պայմանական) միավորից բարձր գտնվում են կնիքի թույլտվության ստացումը, կնիքի պատվիրումը, ֆիրմային անվանման գրանցումը, ՀՎՀՀ-ի ստացումը (համապատասխանաբար կազմել են 19,2%, 18,4%, 16,0%, 10,4%), իսկ օտարերկրյա ներդրողներին մտածմունքների տեղիք են տվել ֆիրմային անվանման գրանցումը (26,7%), ՀՎՀՀ-ի ստացումը (18,3%), կնիքի թույլտվությունը (16,7%) և գրանցումը պետոռեգիստրում (13,3%): Ըստ ստեղծման ժամանակահատվածի վերլուծությունը վկայում է, որ 2002թ. և հետո ստեղծված կազմակերպությունները ավելի շատ են մատնանշել ֆիրմային անվանման գրանցման խնդրահարույց բնույթը, քան մինչև 2002թ. ստեղծվածները: Նշվածի տարբերությունն ավելի ցայտուն է Երևանում: Մարզերում 2002թ. և հետո ստեղծվածների համար աճել է նաև կնիքի թույլտվության և կնիքի պատվիրման ու ձեռքբերման խնդիրների նշանակությունը³⁸:

Եթե ըստ նվազող հաջորդականության աստիճանի խմբավորենք գրանցման քայլերը և դիտարկենք Գծապատկերներ VII-IX, ապա ՀՀ-ի կտրվածքով առավել խնդրահարույց են ֆիրմային անվանման գրանցումը, կնիքի թույլտվության ստացումը, և այնուհետև՝ գրանցումը պետական ռեգիստրում: Երևանում խնդրահարույց են եղել ֆիրմային անվանման գրանցումը, գրանցումը պետական ռեգիստրում, և այնուհետև՝ կնիքի պատվիրումը և ձեռքբերումը, իսկ մարզերում՝ կնիքի թույլտվության ստացումը, ֆիրմային անվանման գրանցումը, և այնուհետև՝ կնիքի պատվիրումը և ձեռքբերումը³⁹:

Գծապատկեր VII. Չեռնարկության գրանցման համար անհրաժեշտ քայլերի շարքում խնդրահարույց գործողությունների բաշխումը ՀՀ-ում, ըստ ուժգնության




³⁸ Մույն պարբերությունում օգտագործվել են 58, 60, 62 աղյուսակների տվյալները:


³⁹ Մույն պարբերությունում օգտագործվել են 98 աղյուսակների տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Գծապատկեր VIII. Չեռնարկության գրանցման համար անհրաժեշտ քայլերի շարքում խնդրահարույց գործողությունների բաշխումն Երևանում, ըստ ուժգնության



Գծապատկեր IX. Չեռնարկության գրանցման համար անհրաժեշտ քայլերի շարքում խնդրահարույց գործողությունների բաշխումը մարզերում, ըստ ուժգնության



Փաստորեն պետական գրանցման քայլերի բազմազանությունը և դրանց տեղաբաշխումը տարբեր մարմիններում տնտեսավարող սուբյեկտների համար առաջացնում են որոշակի խնդիրներ, որոնք օժտված են բարդության տարբեր աստիճաններով: Հետևաբար որպես նշված խնդրի լուծման հնարավոր տարբերակ հարցման մասնակիցներին առաջարկվել էր «մեկ պատուհանի» սկզբունքը և դրանում վերը դիտարկված քայլերի ցանկացած համադրությամբ համատեղման հնարավորությունը: Հարցման արդյունքում ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում ըստ կազմակերպա-իրավական ձևի, հիմնադիր/ղեկավարի, ստեղծման տարվա հայտանիշի՝ հարցման մասնակիցները «մեկ պատուհանի» սկզբունքի կառուցվածքը (չնչին տարբերություններով) տեսել են հետևյալ

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

գործընթացների համատեղման մեջ. ֆիրմային անվանման գրանցում, գրանցում պետռեգիստրում, ՀՎՀՀ-ի ստացում, կնիքի թույլտվություն, գրանցում սոցապ հիմնադրամում⁴⁰:

Արդյունքում հարց է առաջանում, թե որ կառույցն իր վրա պետք է վերցնի «մեկ պատուհանի» վարման ծանրությունը, այսինքն որտեղ պետք է տեղաբաշխվի «մեկ պատուհանը»: Այս հարցի պատասխանը ևս որոշակի է: Թե Երևանում (54,5%), թե մարզերում (57,6%) պետական ռեգիստրը ստացել է հարցման մասնակիցների նախընտրությունը: Պետական ռեգիստրը Երևանում ավելի շատ ձայներ է «ստացել» ԲԸ-ի (72,2%) և օտարերկրյա ներդրումով կազմակերպություններից (67,7%), իսկ մարզերում ԱԶ-ի (61,9%) և կրկին օտարերկրյա ներդրումով կազմակերպությունների (60,9%) շրջանում: Որպես «մեկ պատուհանի» տեղաբաշխման հնարավոր կառույցի թեկնածու, ընդհանուր առմամբ, երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է առևտրաարդյունաբերական պալատը, երրորդը՝ հարկային մարմինը: Հետաքրքիր է այն, որ օտարերկրյա ներդրումով կազմակերպությունները հարկային մարմիններին թե Երևանի և թե մարզերի կտրվածքով չեն դիտարկում որպես «մեկ պատուհանի» տեղաբաշխման կառույց: Հետաքրքիր է նաև բիզնես-ռեգիստրի գաղափարի ընդունումը հարցվողների կողմից (5,2%), ինչպես նաև այս նպատակի համար առանձին կառույցի ձևավորման առաջարկությունը (4,7%)⁴¹:

Ֆիրմային անվանման ընտրության ժամանակ ծագող խնդիրների պատճառները հիմնականում դասակարգվել են երկու խմբի. 1. խնդիրներ, որոնք ծագում են գրանցված ֆիրմային անվանումների ցուցակները մատչելի չլինելու պատճառով, 2. խնդիրներ, որոնք ծագում են ֆիրմային անվանումների շփոթության աստիճանի նմանության պատճառով: Նշված պատճառներից «առյուծի բաժինը» պատկանում է 1-ին խմբին, այսինքն ձեռնարկությունները հիմնականում դժգոհում են այն հանգամանքից, որ ֆիրմային անվանման ընտրության ժամանակ հնարավորություն չունեն ծանոթանալու գրանցված ֆիրմային անվանումների հետ, ինչն իր հերթին հանգեցնում է ժամանակի անտեղի կորստի՝ կապված ընտրված ֆիրմային անվանման արդեն գրանցված լինելու պատճառաբանությամբ մերժման հետ: 2-րդ տեղում է ֆիրմային անվանումների շփոթության աստիճանի նմանության պատճառը, սակայն որոշ դեպքերում վերջին պատճառն առաջ է ընկնում առաջինից: Օրինակ, Երևանում ԱԶ-ն (66,7%) և կին ղեկավար/հիմնադրող կազմակերպությունները (58,3%) առաջնությունը տալիս են շփոթության աստիճանի նմանությանը⁴²:

Խնդիրների տեղիք է տալիս ոչ միայն ֆիրմային անվանման ընտրությունը, այլ նաև գրանցումն ու օգտագործումը: Այդ խնդիրները կրում են ինչպես վարչարարական, այնպես կիրառական բնույթ: Եթե փորձենք վարկանիշել ֆիրմային անվանման գրանցման և օգտագործման խնդիրները, ապա 1-ին տեղում՝ ըստ ձեռնարկությունների կազմակերպա-իրավական ձևի, հիմնադիր/ղեկավարի, գրանցման ժամկետների, ժամանակի կորուստն է, 2-րդ տեղում՝ սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը (նշված երկու խնդիրները սույն հետազոտության իմաստով հանդիսանում են վարչարարական), իսկ արդեն երրորդ տեղը զբաղեցնում են օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը, այսինքն տնտեսավարող սուբյեկտներին ավելի շատ հուզում են, և նրանց մոտ դժգոհություն է առաջացնում գրանցող մարմնի աշխատակիցների հետ հարաբերությունները, որոնց գիտելիքների և սպասարկման ցածր մակարդակի պատճառով ժամանակի կորուստը տնտեսավարող սուբյեկտների համար առաջնահերթ նշանակության խնդրի է վերածվում⁴³:

⁴⁰ Սույն պարբերությունում օգտագործվել են 64, 66, 68 աղյուսակների տվյալները:

⁴¹ Սույն պարբերությունում օգտագործվել են 70 աղյուսակի տվյալները:


⁴² Սույն պարբերությունում օգտագործվել են 72 աղյուսակի տվյալները:

⁴³ Սույն պարբերությունում օգտագործվել են 74, 76, 78 աղյուսակների տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.


Ներկայացվող հետազոտության շրջանակներում փորձ է արվել գնահատել ձեռնարկության գրանցման⁴⁴ համար ծախսվող ժամանակը և գումարը՝ ըստ հարցվողների մոտավոր հաշվարկների⁴⁵: Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը (գծապատկերներ 11-15):

Գծապատկեր 11: Ձեռնարկության գրանցման համար ծախսված ժամանակը ՀՀ-ում



Գծապատկերից հետևում է, որ հարցվածների ընդամենը 15%-ն է ձեռնարկությունը գրանցել մինչև 7 օրում: 8-15 օրում և 16-30 օրում գրանցվածների տոկոսային հարաբերությունները բավական մոտ են, և միասին կազմում են հարցվածների 70%-ը: Հարկ է նշել, որ 15 տոկոսի մոտ ձեռնարկության գրանցումը տևել է մեկ ամսից ավել:

Գծապատկեր 12: Ձեռնարկության գրանցման համար ծախսված գումարը ՀՀ-ում



Ինչպես երևում է 12 գծապատկերից⁴⁶, ձեռնարկության գրանցման համար ծախսված գումարը հարցվածների գերակշիռ մեծամասնության մոտ գերազանցում է 50000 դրամը: Եթե փորձենք միավորել ձեռնարկության գրանցման բոլոր փուլերում անհրաժեշտ պաշտոնական վճարները՝ տուրքերը (15 գծապատկերից երևում է, որ դրանց մակարդակը հարցվածների 56%-ի գնահատմամբ խելամիտ է⁴⁷), ստացված գումարը չի գերազանցի 50000 դրամը: Հետևաբար ձեռնարկության գրանցման ընթացքում գործարարը բացի պետական տուրքերից և այլ պարտադիր վճարներից, որպես կանոն, կատարում է լրացուցիչ այլ ծախսեր: Ենթադրվում է, որ դա կարող է կապված լինել նաև խորհրդատուներին տրվող գումարների հետ:

Ինչպես արդեն նշվել է, իրավաբանական անձը կարող է ստեղծել մասնաճյուղ (ներկայացուցչություն), որը ենթակա է օրենքով սահմանված կարգով պետական գրանցման: Մասնաճյուղի (ներկայացուցչության) պետական գրանցումը ևս բախվում է որոշակի խնդիրների: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ի կտրվածքով ձեռնարկությունների մոտ ծագող ժամանակի կորուստի և սպասարկման պրոֆեսիոնալիզմի խնդիրները գտնվում են նույն հարթության վրա (16,3%): Մարզերում իրավիճակը ԲԸ-ի համար պահպանվում է (նշված երկու խնդիրների նշանակությունը կազմում է 25%), իսկ ՍՊԸ-ի մասնաճյուղ գրանցելիս սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակի խնդիրը գտնվում է բավական ցածր հարթության վրա: Օրինաչափությունը, որ

⁴⁴ «Ձեռնարկության գրանցում» տերմինը սույն հաշվետվության շրջանակներում նկատի է ունենցվել ֆիրմային անվանման գրանցում, գրանցում պետական ռեգիստրում, ՀՎՀՀ-ի ստացում, կնիքի թույլտվության ստացում և դրա ձեռքբերում, գրանցում սոցալ հիմնադրամում գործընթացները:

⁴⁵ Սույն պարբերությունում օգտագործվել են 81 աղյուսակի տվյալները:


⁴⁶ Սույն պարբերությունում օգտագործվել են 83 աղյուսակի տվյալները:

⁴⁷ Սույն պարբերությունում օգտագործվել են 95 աղյուսակի տվյալները:


Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

գրանցման գործընթացում վարչարարական խնդիրներն իրենց նշանակությամբ գերազանցում են կիրառականին, փոխվում է, եթե մասնաճյուղի գրանցումը դիտարկվում է օտարերկրյա ներդրողի տեսանկյունից: Դա բնական է, քանի որ մասնաճյուղեր Հայաստանում հիմնականում գրանցում են օտարերկրյա կազմակերպությունները, իսկ հաշվի առնելով խնդրի օրենսդրական կարգավորվածության աստիճանը, օտարերկրյա ներդրումով կազմակերպություններում առաջին պլան են մղվում օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը (30%՝ ՀՀ-ում, 25%՝ Երևանում, 50%՝ մարզերում): Խնդիրների վերը դիտարկված օրինաչափությունը պահպանվում է, եթե դրանք դիտարկվում ենք նաև ըստ ստեղծման տարվա: Անհրաժեշտ է ավելացնել, որ Երևանում 2002թ. և հետո ստեղծվածների մոտ ժամանակի կորուստի և աջակցող մեխանիզմների բացակայության խնդիրների նշանակությունն աճել է (համապատասխանաբար կազմել է 25% և 16,7%, այն դեպքում, երբ դրանց նշանակությունը մինչև 2002թ. գրանցվածների համար համապատասխանաբար կազմել է 8,3% և 12,5%): Միաժամանակ օրենքի կիրառման խնդիրներում դիտարկվում է դրանց նշանակության նվազման միտումներ⁴⁸:

Գծապատկեր թիվ 13: Իրավաբանական անձանց պետական գրանցամատյանի մասին տեղեկացվածությունը ՀՀ-ում




Գծապատկեր թիվ 14: Իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից օգտվելու աստիճանի կառուցվածքը ՀՀ-ում



Համադրելով գծապատկերները⁴⁹ կարելի է նշել, որ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանի մասին տեղեկացված անձանց մի մասը կարողացել է օգտվել գրանցամատյանից կամ նման անհրաժեշտություն չի ունեցել, այսինքն խնդիրը ոչ թե գրանցամատյանի «բաց» կամ «փակ» լինելու մեջ է, այլ այդ հնարավորության մասին տեղեկացված լինելու⁵⁰:

Գծապատկեր 15: Հարցվածների վերաբերմունքը գրանցման ժամանակ զանձվող տուրքերի մասին



Այն հարցին, թե տեսնում են արդյոք գործարարներն ակնհայտ հակասություններ ՀՀ օրենսդրության մեջ, բավական մեծ ակտիվություն են ցուցաբերել ԲԸ-ն (77,8%) և մինչև 2002թ. գրանցվածները (72,2%) Երևանում, սակայն նրանք դժվարացել են պատասխանել, թե հատկապես որ հակասությունն է բարդացրել իրենց գործունեությունը, այսինքն հարցված-

⁴⁸ Մույն պարբերությունում օգտագործվել են 88, 90, 92 աղյուսակների տվյալները:

⁴⁹ Մույն պարբերությունում օգտագործվել են 85 աղյուսակի տվյալները:

⁵⁰ Մույն պարբերությունում օգտագործվել են 87 աղյուսակի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

ները ինտուիտիվ մակարդակով զգում են որոշակի հակասությունների առկայությունը, սակայն դրանց կոնկրետացումը հայ գործարարների համար դառնում է խնդրահարույց⁵¹:

3. Հետազոտության հիմնական արդյունքները

Ձեռնարկությունների պետական գրանցման փուլում առավել մեծ նշանակություն ունեն վարչարարական խնդիրները, այդ թվում՝ ժամանակի կորուստը, սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը, աջակցող մեխանիզմների բացակայությունը: Չնայած վարչարարականի համեմատ կիրառական խնդիրների նվազ նշանակությանը, դրանք ըստ իրենց ազդեցության կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. օրենքի կիրառման ծախսատարություն,
2. օրենքի կիրառման դժվարություններ ու բացեր,
3. օրենքի անմատչելիություն,
4. օրենքի հակասություններ և երկիմաստություններ:

Ինչ վերաբերում է հարցման մասնակիցների կողմից գրանցման ընթացքում ծագող խնդիրների ուժգնության աստիճանին, ՀՀ-ում հաստատուն կերպով առաջին տեղում է ժամանակի կորուստը, երկրորդում՝ պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը, իսկ երրորդ հաստատուն հորիզոնականը «զբաղեցնում» է պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայությունը:

Նվազող հաջորդականությամբ գրանցման քայլերի խմբավորման արդյունքում Հայաստանում առավել խնդրահարույց են ֆիրմային անվանման գրանցումը, կնիքի թույլտվության ստացումը, և այնուհետև՝ գրանցումը պետական ռեգիստրում: Ընդ որում.

- Երևանում քաղաքում առավել խնդրահարույց են եղել ֆիրմային անվանման գրանցումը, գրանցումը պետական ռեգիստրում, և այնուհետև՝ կնիքի պատվիրումը և ձեռքբերումը
- մարզերում առաջինն է եղել կնիքի թույլտվության ստացումը, սպա ֆիրմային անվանման գրանցումը, և այնուհետև՝ կնիքի պատվիրումը և ձեռքբերումը:

Կնիքի թույլտվության, պատվիրման ու ձեռք բերման հարցում այդպիսի տեսակետի ձևավորման հարցում ակնհայտ է, որ էական գործոն է հանդիսացել այդ գործընթացների կենտրոնացումը մայրաքաղաքում:

Ֆիրմային անվանման գրանցման նմանատիպ արդյունքը դիտարկելիս, թերևս իմաստ ունի հաշվի առնել, որ ֆիրմային անվանման գրանցման համար դիմելու և վկայական ստանալու գործընթացները վերջին տարիներին միատեղված են պետական ռեգիստրում: Այսպիսի «մեկ պատուհանի» առաջին անգամ կիրարկումը կարող էր առաջացնել որոշակի բարդություններ Դ-ա նշանակում է, որ սույն հարցման շրջանակում հնչած «մեկ պատուհանի» բազմաթիվ առաջարկությունները կարիք ունեն հանգամանալից ուսումնասիրության, իսկ գործառույթների միավորման մեթոդաբանությունը՝ մանրամասն մշակման:

Ձեռնարկությունները պետական գրանցման ընդհանուր օրինաչափությունը կայանում է նրանում, որ կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը) այն կարծիքին են, որ պետական գրանցման իրենց խնդիրները կարելի է լուծել ինքնուրույնաբար:

⁵¹ Սույն պարբերությունում օգտագործվել են 96 աղյուսակի տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (70%) գրանցման համար սահմանված կարգին իր իրազեկության աստիճանը համարում է բավարար սեփական գործը գրանցելու համար:

Ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում ըստ կազմակերպա-իրավական ձևի, հիմնադիր/ղեկավարի, ստեղծման տարվա հայտանիշների՝ հարցման մասնակիցները «մեկ պատուհանի» սկզբունքի կառուցվածքը (չնչին տարբերություններով) տեսել են հետևյալ գործընթացների համատեղման մեջ. ֆիրմային անվանման գրանցում, գրանցում պետքեզիստում, ՀՎՀՀ-ի ստացում, կնիքի թույլտվություն, գրանցում սոցալ հիմնադրամում:

Ըստ հարցման մասնակիցների «մեկ պատուհանը» տեղաբաշխման ենթակա հնարավոր թեկնածու կառույցները դասակարգվել են հետևյալ հաջորդականությամբ. 1. պետական ռեգիստր, 2. առևտրա-արդյունաբերական պալատ, 3. հարկային մարմին: Հետաքրքիր է նաև բիզնես-ռեգիստրի գաղափարի ընդունումը հարցվողների կողմից, ինչպես նաև այս նպատակի համար առանձին կառույցի ձևավորման առաջարկությունը:

Ֆիրմային անվանման ընտրության ժամանակ ծագող խնդիրների պատճառները հիմնականում դասակարգվել են երկու խմբի. 1. խնդիրներ, որոնք ծագում են գրանցված ֆիրմային անվանումների ցուցակները մատչելի չլինելու պատճառով, 2. խնդիրներ, որոնք ծագում են ֆիրմային անվանումների շփոթության աստիճանի նմանության պատճառով: Ֆիրմային անվանման գրանցման և օգտագործման ժամանակ ծագող խնդիրները հարցման արդյունքներով ունեն հետևյալ հաջորդականությունը. 1. ժամանակի կորուստ, 2. սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակ, 3. օրենքի կիրառման դժվարություններ ու բացեր:

Հարցվածների ընդամենը 15%-ն է ձեռնարկությունը գրանցել մինչև 7 օրում: 8-15 օրում և 16-30 օրում գրանցվածների տոկոսային հարաբերությունները բավական մոտ են, և միասին կազմում են հարցվածների 70%-ը: Հարկ է նշել, որ 15%-ի մոտ ձեռնարկության գրանցումը տևել է մեկ ամսից ավել:

Ձեռնարկության գրանցման համար ծախսված գումարը հարցվածների գերակշիռ մեծամասնության մոտ գերազանցում է 50000 դրամը: Հետևաբար ձեռնարկության գրանցման ընթացքում գործարարը բացի պետական տուրքերից և այլ պարտադիր վճարներից, որպես կանոն, կատարում է լրացուցիչ այլ ծախսեր: Ենթադրվում է, որ դա կարող է կապված լինել նաև խորհրդատուներին տրվող գումարների հետ:

Հարցման մասնակիցներն ընդհանուր առմամբ ողջունել են «մեկ պատուհանի» սկզբունքի կիրառումը որպես գրանցման ժամկետներն էապես կրճատող և ավելորդ բյուրոկրատիզմը վերացնող մեխանիզմ: Առաջ է քաշվել օրենսդրության շարունակական բարելավումների գաղափարը: Ընդգծվել է նաև պետական մարմինների աշխատակիցների պրոֆեսիոնալիզմի մակարդակի, նրանց գործունեության թափանցելիության, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների տեղեկացվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Որպես վերջին պայմանն ապահովող միջոց, տնտեսավարող սուբյեկտները դիտարկում են հատուկ ձեռնարկների մշակումը և դրանց տարածումը, դասընթացների կազմակերպումը, անվճար խորհրդատվությունը: Եղել են առաջարկներ գրանցված ֆիրմային անվանումների ցանկն ինտերնետում տեղադրելու վերաբերյալ:

ՄԱՍ 4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

1. Լիցենզավորման իրավական գործընթացը

Մինչև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվել են ՀՀ նախարարների խորհրդի 05.03.1991թ. «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին» N 161 որոշմամբ՝ մինչև ուժը կորցրած ճանաչելու պահը /ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 24.03.2001թ. N 895 որոշմամբ/ դրանում կատարված բազմաթիվ փոփոխություններով ու լրացումներով: Ավելորդ չի լինի նշել, որ 1998 թ.-ից N 161 որոշման գործողությունն ընդամենը պայմանավորված էր համապատասխան օրենքի բացակայությամբ, իրավական առումով հիմնավորված չէր և չէր բխում ՀՀ օրենսդրության սկզբունքներից, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի երրորդ հոդվածի համաձայն՝ «քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով», իսկ լիցենզավորման ինստիտուտի կիրառումը միանշանակ ենթադրում է անձի՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու ազատության որոշակի սահմանափակում:

«Լիցենզավորման մասին» ներկայումս գործող ՀՀ օրենքն⁵² ընդունվել է 30.05.2001թ.-ին: Բացի այն, որ Օրենքի ընդունմամբ լրացվեց վերը նշված «օրենսդրական բացը», միևնույն ժամանակ նոր օրենքը բավականին հստակեցրեց լիցենզավորման գործընթացի հարաբերությունները: Սակայն ինչպես և նախկինում գործող որոշումը, այնպես էլ նոր ընդունված օրենքը բնորոշվում է նույն, եթե չասենք՝ թերությամբ, ապա, համենայնդեպս, ոչ ցանկալի մի հատկանիշով. Ուժի մեջ մտնելուց հետո դրանում կատարված բազմաթիվ լրացումներով ու փոփոխություններով, որոնք հիմնականում վերաբերում են գործունեության այս կամ այն տեսակը լիցենզավորման ենթակա համարելուն և/կամ/ հակառակը: Ասվածը, թերևս, կարելի է բացատրել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ոլորտում տեղի ունեցող փոփոխություններով, ինչպես նաև Հանրապետության տնտեսական զարգացման գործընթացը միջազգային նորմերին համապատասխանեցնելու քաղաքականությամբ: Այդուհանդերձ, ինչպես նշվեց վերևում, օրենսդրության մեջ նման հաճախակի փոփոխություններ կատարելը գնահատվում է որպես ոչ ցանկալի երևույթ:

Լիցենզավորման ինստիտուտի կիրառումը, այդ բնագավառում ծագող հարաբերությունների օրենսդրական կարգավորումը բոլորովին էլ ինքնանպատակ գործընթաց չէ: Տնտեսական գործունեության որոշ տեսակներ պարտադիր լիցենզավորման ենթարկելը համարվում է պետության տնտեսական քաղաքականության ուղղություններից մեկը և հետապնդում է կոնկրետ որոշակի նպատակներ, որոնք ամրագրված են հենց Օրենքում /հոդված 5/: Դրանք են՝

ա/ սպառողների իրավունքների պաշտպանությունը

բ/ զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը

գ/ ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը

դ/ անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը:

⁵² այսուհետև նաև՝ Օրենք

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Լիցենզիան հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, միևնույն ժամանակ՝ այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ:

Կախված այն հանգամանքից, թե գործունեության այս կամ այն տեսակն ինչ աստիճանի վտանգ է պարունակում անձանց կյանքի, առողջության, գույքի, պետության և հասարակության շահերի համար և, ընդհանրապես, ինչ ազդեցություն կարող է գործել Օրենքի 5-րդ հոդվածում նշված նպատակների իրագործման գործընթացում, Օրենքը սահմանել է լիցենզիաների տրման պարզ և բարդ ընթացակարգեր: Նման տարանջատումը միանշանակ ողջունելի և առաջադեմ քայլ է, քանի որ հնարավորություն է տալիս պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների ձեռք բերման ընթացքում խուսափել բարդ ընթացակարգում նախատեսված՝ ներկայացման ենթակա փաստաթղթային ծանր բեռից, ինչպես նաև խուսափել ժամանակի անհարկի կորստից /պարզ լիցենզիան տրվում է նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց երեք օր հետո, այն դեպքում, երբ բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների համար սահմանվում է երեսնօրյա ժամկետ/: Հատկանշական է նաև, որ պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների ոլորտի հարաբերությունները կարգավորվում են միայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով:

Պետք է նշել, որ լիցենզիաների տրման պարզ և բարդ ընթացակարգերի սահմանումը ընթացակարգային տարանջատման տեսանկյունից միակը չէ: Օրինակ, լիցենզիաների տրման բարդ ընթացակարգը նույապես դիֆերենցացված է և նախատեսում է գործունեության այնպիսի տեսակներ, որոնց համար լիցենզիան տրվում է միայն մրցույթով: Բացի այդ, գործունեության որոշ տեսակների համար որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ, սահմանվում են մասնագիտական որակավորման պահանջներ:

Լիցենզիայի տրման, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով լիցենզավորող մարմինները ստեղծում են հանձնաժողովներ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված գործողությունները կատարվում են կոլեզիալ լիցենզավորող մարմինների որոշումներով: Լիցենզիա ձեռք բերող սուբյեկտներին ավելորդ չէ իմանալ հետևյալ առանձնահատկությունները.

- էներգետիկայի և արժեթղթերի շուկայի բնագավառում լիցենզավորման առանձնահատկությունները սահմանվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհակասող «էներգետիկայի մասին» և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքներով ու դրանց համաձայն ընդունված լիցենզավորման կարգերով,

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման, այդ թվում՝ լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման, դադարեցման և այլ ընթացակարգերն ու պահանջները չեն տարածվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրվող լիցենզիաների վրա,

- ապահովագրության բնագավառում լիցենզավորման առանձնահատկությունները սահմանվում են նաև «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով, դրա համաձայն ընդունված լիցենզավորման կարգերով, իսկ պարտադիր ապահովագրության տեսակների դեպքում՝ նաև համապատասխան պարտադիր ապահովագրության մասին օրենքներով և դրանց համաձայն ընդունված լիցենզավորման կարգերով,

- հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման բնագավառում լիցենզավորման հետ կապված իրավահարաբերությունները «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են այնքանով, որքանով այն չի հակասում բնագավառը կարգավորող «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային կանոնակարգ» ՀՀ օրենքների և դրանց հիման

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

վրա հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ընդունած համապատասխան կարգերին:

Լիցենզավորման հրապարակային սկզբունքը պահպանելու նպատակով լիցենզավորող մարմինները վարում են լիցենզիաների գրանցամատյաններ, յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար կազմում են անհատական գործ և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների պահանջով, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց դիմումի հիման վրա երեք օրվա ընթացքում տրամադրում են համապատասխան տեղեկատվություն:

Լիցենզիաները, ըստ դրանց գործողության ժամկետի, բաժանվում են որոշակի ժամկետով տրված և անժամկետ լիցենզիաների: Պարզ ընթացակարգով տրված լիցենզիաները տրվում են անժամկետ: Եթե օրենքով այլ բան սահմանված չէ, որոշակի ժամկետով տրված լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից առաջ լիցենզավորված անձն իրավունք ունի լիցենզիայի ժամկետը երկարաձգելու հայտ ներակայացնել լիցենզավորող մարմնին:

Որոշակի հանգամանքների փոփոխության դեպքում լիցենզավորված անձինք պարտավոր են համապատասխան փոփոխությունները լիցենզիայում ամրագրելու դիմումով հայտ ներակայացնել լիցենզավորող մարմնին: Այդպիսի հանգամանքներ են համարվում մասնավորապես իրավաբանական անձի վերակազմակերպման, նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքերը /նույնը վերաբերվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ, ընդհանրապես, ֆիզիկական անձի անվան կամ բնակության վայրի փոփոխմանը/: Պարտադիր ամրագրման է ենթակա նաև գործունեության իրականացման վայրի փոփոխումը կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելը:

Գործունեության այս կամ այն տեսակով զբաղվելու համար լիցենզիայի առկայության պայման սահմանելով՝ Օրենքը նախատեսում է նաև լիցենզավորման կանոնները չպահպանելու, խախտելու հետևանքները: Կախված խախտման բնույթից կիրառվում են պատասխանատվության տարբեր մեթոդներ: Դրանցից կարելի է նշել լիցենզիայի գործողության կասեցումը և լիցենզիայի գործողության դադարեցումը: Եթե լիցենզիայի գործողության կասեցման դեպքում անձը միայն ժամանակավորապես է զրկվում լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից, ապա լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով: Հարկ է նշել, որ լիցենզիայի գործողության թե կասեցման, թե դադարեցման դեպքում, եթե դա իրականացվել է անձի դիմումի համաձայն, լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու, իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման կամ ֆիզիկական անձի մահվան հետ կապված, ապա դրանք, իհարկե, պատասխանատվության միջոց չեն հանդիսանում: Առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է նաև վարչական կամ քրեական պատասխանատվություն՝ կախված դրա հետևանքով այլ անձանց, կազմակերպություններին կամ պետությանը հասցված վնասի չափերից /վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված՝ 169 և ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված՝ 188/:

Պատասխանատվությանն անդրադառնալիս ավելորդ չի լինի նշել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 44-րդ և 45-րդ հոդվածների դրույթները.

- «հոդված 44. եթե լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից տրվել է օրենսդրության պահանջների խախտումով, որի հետևանքով լիցենզավորված անձը վնաս է պատճառել ֆիզիկական

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

կամ իրավաբանական անձանց, ապա Հայաստանի Հանրապետությունը լիցենզավորված անձի հետ կրում է համապարտ պատասխանատվություն»),

- «հոդված 45. պետությունը պարտավոր է փոխհատուցել լիցենզիա ստանալու, լիցենզիաների գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակը տալու վերաբերյալ հայտերն ապօրինի մերժելու կամ լիցենզիայի գործողությունն ապօրինի կասեցնելու հետևանքով հայտատուին կամ լիցենզավորված անձին պատճառված վնասները»:

Վերոնշյալ երկու հոդվածների դրույթները մասնավոր ուշադրության են արժանանում այն պատճառով, որ Օրենքի կիրառման արդյունավետ և պարզեցված մեխանիզմների առկայության դեպքում հնարավորություն կընձեռնվի հնարավորինս խուսափել լիցենզավորման բնագավառում առաջացող վարչարարական և կիրառական բազմաթիվ խնդիրներից, որոնց առընչվում են գործարարները լիցենզավորման գործընթացում:

2. Լիցենզավորման վարչարարական և իրավական խնդիրները


Ինչպես արդեն նշվեց, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը բավականին հստակեցրեց լիցենզավորման գործընթացում ծագող հարաբերությունների կարգավորումը: Օրենքը՝ որպես այդպիսին, կարելի է համարել բավականին հաջողված, հաշվի չառնելով, իհարկե, դրանում կատարված բազմաթիվ փոփոխությունները /նշենք, որ 2001 թվականին Օրենքում ներառված լիցենզավորման ենթակա գործունեության 79 տեսակներին մինչ այսօր ավելացել է ևս 42 տեսակ/: Սակայն հարկ է նշել, որ Օրենքը հանդիսանում է ՀՀ օրենսդրության ընդամենը բաղկացուցիչ մի մասը և դրա հաջողված կամ չհաջողված լինելու գնահատականը պետք է տրվի ոչ միայն ձևական տեսանկյունից՝ որպես առանձին փաստաթուղթ, այլ այն պետք է դիտարկվի օրենսդրության ամբողջ համակարգում, և այս դեպքում արդեն Օրենքի իրավական գնահատականն անմիջականորեն կախման մեջ է դրվում դրա՝ այլ իրավական ակտերի համադրմամբ կիրառման արդյունավետությունից: Նման համակարգված մոտեցումը թույլ է տալիս բացահայտելու մի շարք վարչարարական ու կիրառական խնդիրներ, որոնք, ինչպես և ցույց են տալիս հետազոտության արդյունքները, դեռևս առկա են մեր հասարակարգում: Այդպիսի խնդիրներ են հանդիսանում մասնավորապես.

- պետության կողմից աջակցող մեխանիզմների ոչ արդյունավետ կիրառումը,
- Օրենքի անմատչելիությունը, որը տանում է դրա չիմացության,
- պետական մարմինների որոշ աշխատակիցների անձանց սպասարկելու և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակը,
 - ժամանակի անտեղի կորուստը,
 - Օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը,
 - պետական մարմնի կամ նրա աշխատակցի գործողությունների/անգործության բողոքարկման ընթացակարգային բարդությունները,
 - պետական մարմնի աշխատակիցների շրջանում անձնական կապերի էական ազդեցությունը տվյալ անձին սպասարկելու մակարդակի վրա:

Նշված խնդիրները նույնպես դիտարկվում են մեկ ընդհանուր համակարգում, փոխկապակցված ու փոխապայմանավորված են մեկը մյուսով, և մեկի առկայությունը անխուսափելիորեն հանդիսանում է նախորդի տրամաբանական շարունակությունը և հետևանքը:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Լիցենզավորվող գործունեությանը զբաղվող ընկերություններից 57.8 տոկոսը իրենց գործունեության լիցենզիան ստացել են պարզ ընթացակարգով, իսկ 38.3 տոկոսը՝ բարդ /այլ պատասխանը կազմում է ընդամենը 3.9 տոկոս/: Եթե անդրադառնանք ընկերությունների կազմակերպարավական ձևին, ապա կարելի է նկատել, որ լիցենզավորված գործունեություն ծավալող ընկերությունների մեջ գերակշիռ մասը՝ 58.3 տոկոսը, կազմում են ՍՊԸ-ները⁵³:




Լիցենզիաների ստացման հետ կապված ընկերությունները հիմնականում ունեն խնդիրներ ժամանակի անհարկի կորստի /19.6 տոկոս/ և պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակի /17.4 տոկոս/ հետ: Գրանցից «ոժգոհ» են խնդիրներ ունեցող ՍՊԸ-ների, համապատասխանաբար ըստ խնդրի, 20.7 և 17.2 տոկոսը, ԲԸ-ների՝ 18.4 և 19.4 տոկոսը, ԱԶ-ների՝ 17.6 և 11.8 տոկոսը: Այս

երկու խնդիրներն ինքնին փոխկապակցված են. սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակն ինքնաբերաբար հանգեցնում է ժամանակի անհարկի կորստի: Այնուամենայնիվ, ասվածը պետք է լրացնել առկա, ոչ պակաս կարևոր այլ խնդիրներով: Գործարարների 14.5 տոկոսը խնդիրների շարքում գերակայությունը տալիս են պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայությանը, 12.2 տոկոսը՝ օրենքի կիրառման դժվարություններին ու բացերին: Պատկերը գրեթե նույնն է, երբ ընկերության հիմնադիրը կամ ղեկավարը կին է, այսինքն տվյալ ընկերություններում նույնպես առկա խնդիրների շարքում գերակայում են ժամանակի անհարկի կորստը /26.4 տոկոս/, պետական մարմինների սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակը /13.9 տոկոս/, ինչպես նաև օրենքի կիրառման ծախսատարությունը /13.9 տոկոս/: Վերլուծելով հարցման արդյունքները՝ կարելի է գալ այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ մինչև 2002 թվականը լիցենզիայի տրման հետ կապված խնդիրներն ավելի շատ են եղել, քան 2002 թվականից հետո: Տեսնում ենք, որ խնդիրները կապված ժամանակի անհարկի կորստի և պետական մարմինների սպասարկման ու պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակի հետ, 2002 թվականից հետո միտում ունեն նվազման, և վստահաբար կարելի է ասել, որ դա էական է, քանի որ մնացած շատ խնդիրներն ունեն աճի միտում: Սակայն պատկերն այլ է, երբ վերլուծությանը մոտենում ենք Երևան քաղաքի և մարզերի տեսանկյունից: Երևան քաղաքում 2002 թվականից հետո գրեթե երկու անգամ կրճատվել են խնդիրները, միևնույն ժամանակ, դրանք մարզերում ավելացել են մոտ 50 տոկոսով: Եվ այն առաջընթացը, որը նկատվում է վերը նշված հիմնական երկու խնդիրների կապակցությամբ, որը մայրաքաղաքում գնում է դեպի նվազում, մարզերում ունի աճի միտում /այստեղ գնալով ավելացել են ժամանակի անհարկի կորստի և պետական մարմինների սպասարկման ու պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակի հետ կապված խնդիրները/: Անհրաժեշտ է նաև նշել, որ ոչ ֆորմալ հատկացումների մասով փոփոխություն չի նկատվում, չնայած որ այն կազմում է նշված խնդիրների ընդամենը 2.6 տոկոսը⁵⁴:

⁵³ Սույն պարբերությունում օգտագործվել են 99, 100, 101 աղյուսակների տվյալները:

⁵⁴ Սույն պարբերությունում օգտագործվել են 102-110 աղյուսակների տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.




Գործունեության առանձին տեսակների լիցենզիաներ ստանալիս ընկերությունների 54.8 տոկոսը այդ խնդիրը լուծել են ինքնուրույն, իսկ 36.5 տոկոսը՝ գտնում են, որ անհրաժեշտ է դիմել խորհրդատուի օգնությանը: Պատկերը գրեթե նույնն է թե ՍՊԸ-ների, և թե ԱԶ-ների մոտ: Հարցմանը մասնակցած ԲԸ-ների մոտ պատկերը հետևյալն է՝ համապատասխանաբար 50 և 41.9 տոկոս: Պետք է նշել, որ Երևանում կին հիմնադիր/ղեկավար ունեցող ընկերությունների 67.4 տոկոսի կարծիքով լիցենզիա կարելի է ստանալ ինքնուրույն, ի տարբերություն մարզերում գործող կին հիմնադիր/ղեկավար ունեցող ընկերությունների, որտեղ այս ցուցանիշը կազմում է ընդամենը 59 տոկոս: Օտարերկրյա ներդրում ունեցող կազմակերպությունների մոտ հարաբերակցությունն այսպիսին է. ինքնուրույն՝ 60.9 տոկոս, խորհրդատուի օգնությամբ՝ 32.8 տոկոս: Ժամանակակից առումով խնդրի դիտարկման պարագայում կարելի է ասել, որ 2002 թվականից հետո շատ ավելի ընկերություններում են կարծում, որ լիցենզիա կարելի է ստանալ ինքնուրույն. հարցմանը մասնակցածների 59.7 տոկոսը, ի համեմատումն՝ 50.8 տոկոսի⁵⁵:

Հարցմանը մասնակցած ընկերությունների 72 տոկոսը դժվարացել է պատասխանել այն հարցին, թե կա՞ն արդյոք գործունեության այնպիսի տեսակներ, որոնք ներկայումս լիցենզավորման ենթակա են, բայց կարելի է դարձնել ազատ, կամ՝ հակառակը: «Այո, կան» և «Ոչ, չկան» պատասխանները կազմել են համապատասխանաբար 17.6 և 10.5 տոկոս: Ուշագրավ է այն փաստը, որ գոյություն ունի էական տատանում «Այո, կան» պատասխանների մեջ կախված մինչև 2002 թվականը և 2002 թվականից հետո գրանցված կազմակերպությունների մեջ, մինչև 2002 թվականը՝ 21.9, 2002 թվականից հետո՝ 12.2 տոկոս: Այս տատանումը ավելի ակնառու է Երևան քաղաքում գրանցված կազմակերպությունների մոտ. համապատասխանաբար 30.7 և 15.6 տոկոս: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ ի տարբերություն մարզերի, որտեղ «Այո, կան» պատասխանը կազմում է 9.7 տոկոս, իսկ «Ոչ, չկան» պատասխանը՝ 11.1 տոկոս, Երևան քաղաքում պատկերը լրիվ հակառակն է. «Այո,

⁵⁵ Սույն պարբերությունում օգտագործվել են 111-113 աղյուսակների տվյալները:

կան»՝ 25.2 տոկոս, «Ոչ, չկան»՝ 9.8 տոկոս: Մարզերում գործող և օտարերկրյա ներդրում ունեցող կազմակերպությունների կարծիքով ընդհանրապես չկա որևէ գործունեության տեսակի լիցենզավորման փոփոխության կարիք⁵⁶:

Վերլուծելով պետական մարմինների գործունեությունը՝ կապված լիցենզավորման գործընթացի հետ, տեսնում ենք, որ հարցմանը մասնակցած գործարարների ընդամենը 26.9 տոկոսի կարծիքով է, որ այն հրապարակային ու թափանցիկ է, 37.5 տոկոսը կարծում է, որ պետական մարմինները գործում են ոչ հրապարակային և ոչ թափանցիկ: Տոկոսային առումով մեծ տեղ է գրավում նաև «Դժվարանում են պատասխանել» պատասխանը՝ 35.6 տոկոս: Այս պատկերն է նաև, երբ հարցը վերլուծում ենք ըստ ընկերությունների կազմակերպատիպական ձևի, բացառությամբ միայն ԱՁ-ների, որտեղ՝ 34.6 տոկոսը գտնում է, որ գործընթացը հրապարակային և թափանցիկ է, և միայն 30.8 տոկոսն է համոզված հակառակում: Երևան քաղաքում այս տոկոսային տարբերությունն ավելի մեծ է՝ համապատասխանաբար 20.9 և 44.1 տոկոս: Խնդրին այլ աչքերով են նայում մարզերում գործող ընկերությունները, որտեղ հարաբերակցությունը հակառակն է՝ համապատասխանաբար 33 և 30.7 տոկոս: Ընդ որում, պետք է նշել, որ այս արդյունքը պայմանավորված է հիմնականում ԱՁ-ների պատասխանների հարաբերակցությունից, որոնց 45.5 տոկոսը գտնում է, որ պետական մարմինների գործունեությունը՝ կապված լիցենզավորման գործընթացի հետ, թափանցիկ ու հրապարակային է, և միայն 4.5 տոկոսն է պնդում հակառակը: Եվ ընդհանրապես, մարզերում գրեթե բոլոր տիպի հարցվածների պարզ մեծամասնությունը գործընթացի հրապարակայնությունը գնահատում է դրական⁵⁷:



Գործունեության տեսակները բաժանելով՝ արտադրություն, ծառայություններ, առևտուր և այլ, չորս հիմնական խմբերի՝ տեսնում ենք, որ հարցմանը մասնակցած գործարարներից 51.8 տոկոսը հրաժարվել են արտադրությամբ զբաղվելու իրենց մտադրությունից, 28.6 տոկոսը հրաժարվել է որոշակի ծառայությունների մատուցումից:

«Առևտուր» խումբը ստացել է 0 տոկոս: «Այլ» խմբին պատկանող գործունեության տեսակներից հրաժարվել են 19.6 տոկոսը: Սրա պատճառ է հանդիսացել տվյալ գործունեության տեսակով զբաղվելու համար անհրաժեշտ լիցենզիայի առկայությունը: Պետք է նշել, որ այս օրինաչափությունը նույնն է հարցմանը մասնակցած բոլոր տիպի ընկերությունների մոտ⁵⁸:

Ընկերությունները լիցենզիայի ժամկետի երկարաձգման կամ վերաձևակերպման հետ կապված առնչվում են մի շարք խնդիրների հետ: Ամենազգալի խնդիրը գործարար միջավայրի համար հանդիսանում է պետական մարմիններում սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար


⁵⁶ Մույն պարբերությունում օգտագործվել են 114-116 աղյուսակների տվյալները:

⁵⁷ Մույն պարբերությունում օգտագործվել են 117-119 աղյուսակների տվյալները:

⁵⁸ Մույն պարբերությունում օգտագործվել են 120-122 աղյուսակների տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

մակարդակը /22.9 տոկոս/: Պատասխանների մեջ երկրորդ տեղում է ժամանակի կորուստը /21.4 տոկոս/: Դրանից դժգոհ են խնդիրներ ունեցող ՍՊԸ-ների 15.8 տոկոսը, ԲԸ-ների 25 տոկոսը, իսկ ԱԶ-ների 50 տոկոսը: Առկա խնդիրների 14.3 տոկոսը ընկերությունները գտնում են պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայության մեջ: Այս պատկերը գրեթե նույնն է Երևան քաղաքի և մարզերի կտրվածքով⁵⁹:




Լիցենզիայի գործունեության կասեցման կամ դադարեցման հետ կապված՝ ընկերությունները հիմնականում ունեն խնդիրներ ժամանակի անհարկի կորստի /17.2 տոկոս/ հետ: Դրանից «դժգոհ են» խնդիրներ ունեցող ՍՊԸ-ների 21.4 տոկոսը և ԲԸ-ների 13.3 տոկոսը: Առկա մյուս խնդիրներից՝ պետական մարմիններում սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակը, օրենքի հակասությունները և երկիմաստությունները, օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը և օրենքի կիրառման ծախսատարությունը, գործարարների աչքերում ունեն միևնույն կարգավիճակը՝ 13.8 տոկոս: Վերլուծելով հարցման արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ մինչև 2002 թվականը լիցենզիայի գործունեության կասեցման կամ դադարեցման հետ կապված խնդիրներն ավելի շատ են եղել, քան 2002 թվականից հետո /համապատասխանաբար՝ 86.2 և 13.8 տոկոս/: Այս պատկերը նույնն է Երևան քաղաքի և մարզերի կտրվածքով⁶⁰:

⁵⁹ Սույն պարբերությունում օգտագործվել են 123-131 աղյուսակների տվյալները:

⁶⁰ Սույն պարբերությունում օգտագործվել են 132-140 աղյուսակների տվյալները:

Գծապատկեր 20: Լիցենզիայի գործունեության կասեցման կամ դադարեցման հետ կապված խնդիրների կառուցվածքը

- | | |
|---|---|
| ■ աջակցող մեխանիզմների բացակայություն | ■ օրենքի անմատչելիություն |
| ■ սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակ | ■ օրենքի հակասություններ և երկիմաստություններ |
| ■ ժամանակի կորուստ | ■ օրենքի կիրառման դժվարություններ ու բացեր |
| ■ բողոքարկման ընթացակարգային բարդություններ | ■ անձնական կապերի բացակայություն |
| ■ օրենքի կիրառման ծախսատարություն | ■ այլ |



Վերլուծելով պետական մարմինների լիցենզավորման հետ կապված գործողությունների կամ որոշումների բողոքարկման արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ բողոքարկող կազմակերպությունների 60 տոկոսը խնդիրները մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծել են իրենց օգտին: Դրանց 40 տոկոսը՝ մերժվել են: Ըստ ընկերությունների տիպերի պատասխանները հետևյալն են. ՍՊԸ-ներ՝ համապատասխանաբար 60 և 40 տոկոս, ԲԸ-ներ՝ 56.3 և 43.8 տոկոս, ԱԶ-ներ՝ 75 և 25 տոկոս, օտարերկրյա ներդրումով՝ 54.5 և 45.5 տոկոս, կին ղեկավար կամ հիմնադիր ունեցող՝ 62.5 և 37.5 տոկոս⁶¹:

Մեծ հետաքրքրություն է վայելում նաև լիցենզավորմանն առնչվող օրենսդրության մեջ առկա ակնհայտ հակասություններին վերաբերվող հարցը: Հարցմանը մասնակցած ընկերությունների 99.8 տոկոսը գտնում է, որ օրենսդրության մեջ կան ակնհայտ հակասություններ, սակայն նրանք դժվարացել են դրանք նշել⁶²:

Եթե փորձենք լիցենզավորման գործընթացում առկա խնդիրների որոշակի հերթականություն սահմանել երևի թե պետք է սկսել Օրենքի չիմացությունից, քանի որ անձի սեփական իրավունքների ու պարտականությունների մասին անիրազեկությունը զրկում է նրան իր իրավունքները պատշաճ մակարդակով պաշտպանելու հնարավորությունից, որի արդյունքում դա չարաշահելու հավանականությունը բավականին մեծանում է: Առաջին հայացքից թվում է, որ բոլոր նախապայմաններն ապահովված են Օրենքի չիմացության խնդիր բացառելու ուղղությամբ. բնագավառին վերաբերվող ցանկացած իրավական ակտի ձեռքբերումն առանձին դժվարություն չի ներկայացնում, եռօրյա ժամկետում անձը կարող է ստանալ իրեն հետաքրքրող ցանկացած տեղեկատվություն լիցենզավորման գրանցամատյանից, գործում են մեծ թվով մասնագիտացված խորհրդատվական կազմակերպություններ: Սակայն հաշվի առնելով բնակչության կենսական, իրավական մակարդակը, ինչպես նաև խնդիրները լուծելու ավանդական մեթոդները, կարելի է

⁶¹ Սույն պարբերությունում օգտագործվել են 141-143 աղյուսակների տվյալները:

⁶² Սույն պարբերությունում օգտագործվել են 144-146 աղյուսակների տվյալները:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

նկատել, որ ոչ բոլորին է հասանելի դառնում գործունեության նախապայման հանդիսացող տեղեկատվությունը: Ասվածից ակնհայտ է դառնում, որ ոչ պատշաճ մակարդակի վրա է գտնվում պետության կողմից աջակցող մեխանիզմների կիրառումը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ անձը որոշ դեպքերում հիմնադրում է ընկերություն, պատրաստվում է զբաղվել գործունեության կոնկրետ տեսակով, սակայն տեղյակ չլինելով, որ այն ենթակա է լիցենզավորման, դրանից բխող բոլոր հետևանքներով՝ պետական տուրքեր, ժամանակի կորուստ, լիցենզիայի տրման ընթացակարգ և այլն: Ասել, որ եռօրյա ժամկետը՝ պարզ լիցենզիայի, և երեսուցյա ժամկետը՝ բարդ լիցենզիայի տրման համար համարվում են ժամանակի անհարկի կորուստ, երևի թե ճիշտ չի լինի, սակայն այդ ժամկետներն արդարացված են միայն այն դեպքում, եթե անձն ի սկզբանե իրազեկված է եղել դրանց մասին և չի կանգնել փաստի առաջ կես ճանապարհին, ինչպես մեր օրինակում: Այս առումով իզուր չէր, որ հարցվողների զգալի մասը՝ որպես խնդրի լուծում, առաջարկում էր ստեղծել խորհրդատվական, տեղեկատվական «սենյակ» պետ. ռեգիստրի կառույցում:

Ծախսատարության խնդրին անդրադառնալիս, եթե խոսքը վերաբերվում է լիցենզավորման համար գանձվող պետական տուրքերին, երևի թե սխալ կլինի միանշանակորեն կարծիք հայտնել դրանց անհարկի մեծության վերաբերյալ, առանց խորությամբ վերլուծելու այն չափանիշները, որոնք դրվել են տվյալ գործունեության տեսակի համար գանձվող պետական տուրքը որոշելու հիմքում: Սակայն միևնույն ժամանակ աչք է զարնում այն փաստը, որ, համենայն դեպս, գործունեության որոշ տեսակների համար պետական տուրքի չափը չպատճառաբանված դժվարություն է ստեղծում տվյալ ոլորտում փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների մուտքի համար: Ասվածը հաշվի առնելով կարելի է եզրակացնել, որ լիցենզավորման գործընթացում անհարկի ծախսատարությունը գոյություն ունի հիմնականում խորհրդատվություն, տեղեկատվություն ստանալու, այլ անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու, լիցենզիայի տրման հնարավոր մերժումը բացառելու ընթացակարգերում:

Թերևս, ժամանակի անհարկի կորուստը և օրենքի կիրառման ծախսատարությունը կարող են պայմանավորված լինել պետական մարմնի և/կամ նրա աշխատակցի գործողությունը/անգործությունը բողոքարկելու ընթացակարգային դժվարություններով, քանի որ հենց այս ընթացակարգն իրենից ներկայացնում է արդեն իսկ բավականին ծախսատար ու ժամանակատար և, շատ հաճախ, անարդյունք գործընթաց: Այդ մասին նշել են նաև մի շարք հարցվողներ: Շատերը չէ, որ օգտվում են բողոքարկման ինստիտուտից, թերևս համոզված լինելով, որ իրենց խնդրի լուծումը ստանալու են ոչ թե տվյալ մարմնում, այլ դատարանում: Հիշենք, որ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում, վարչական տուգանքը բռնագանձելու համար պետական մարմնին վերապահված է եռամսյա ժամկետ, իսկ վարչական պատասխանատվության ենթարկված անձը վարչական որոշումը բողոքարկելու համար ունի ընդամենը տաս օր ժամանակ /այդ ժամկետը հիմնականում չիմացության պատճառով բաց է թողնվում/: Ինչպես երևում 147-րդ աղյուսակից, լիցենզիայի ստացման հետ կապված խնդիրների շարքում վեջին տեղը (ամենացածր տոկոսը) զբաղեցնում են «բողոքարկման ընթացակարգային բարդությունները»: Թերևս նման գնահատականը բացատրվում է ոչ թե իրականում նշված բարդությունների բացակայությամբ, այլ հարցվողների՝ բողոքարկման ընթացակարգերից ընդհանրապես հեռու լինելու դիրքորոշումից (հաշվի առնելով ներկա պահին ձևավորված գործարար շրջանակի առանձնահատկությունները): Երևույթը հատկապես նկատելի է մարզերում՝ Օ տոկոս, որը թերևս պայմանավորված է մարզային բնակչության ոչ շատ քվաքանակով և առօրյա կյանքում իրար ճանաչելով:

Որպես ծախսատարության և ժամանակի անհարկի կորուստի պատճառ՝ կարևորվում է նաև այն փաստը, որ լիցենզավորման հետ կապված գործառույթների զգալի մասն իրականացվում է միայն

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

մայրաքաղաքում, որի հետևանքով դժվարություններ են առաջանում մարզերում տնտեսավարող սուբյեկտների համար՝ առաջացնելով նաև խնդրի մյուս տարատեսակը՝ մարզերում լիցենզավորման ենթակա գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության ոչ պատշաճ մակարդակը:

3. Հետազոտության հիմնական արդյունքները


Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը կիրառման գործընթացում բերում է մի շարք խնդիրների առաջացմանը: Հարցմանը մասնակցած գործարարների մեծ մասը նշում է, որ Օրենքում ակնհայտ հակասություններ գոյություն չունեն, մյուս մասը համոզված է, որ այդ հակասությունները կան, սակայն տարբեր պատճառներով /չի հիշում, ժամանակը չի բավարարում և այլն/ դրանք չի նշում, միևնույն ժամանակ, սակայն, չմոռանալով նշել մի շարք խնդիրներ, որոնց ինքն առընչվել է լիցենզիա ստանալու գործընթացում՝ ժամանակի կորուստ, ծախսատարություն, ոչ ֆորմալ հատուցումներ և այլն: Այս խնդիրը հատկապես առկա է մարզերում, որը թերևս պայմանավորված է լիցենզավորման գործընթացը Երևան քաղաքում կենտրոնացնելու հանգամանքով: Հետազոտությունների արդյունքում կազմված աղյուսակ 103-ից երևում է, որ մարզերում գրանցված և հարցմանը մասնակցած ընկերությունների՝ լիցենզիա ստանալու հետ կապված խնդիրներից պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայությունը, սպասարկման ու պրոֆեսիոնալիզմի ոչ պատշաճ մակարդակը, օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը և ժամանակի անհարկի կորուստը կազմում են ավելի քան 69.4%:

Ընդ որում, ուժգնության տեսանկյունից այդ խնդիրները դասավորվում են հետևյալ հերթականությամբ (Գծապատկերներ X-XVIII).

- ժամանակի կորուստ
- սպասարկման և պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակ
- պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայություն
- օրենքի կիրառման դժվարություններ և բացեր

Ինչպես արդեն նշվել է վերջին տեղը զբաղեցնում է բողոքարկման ընթացակարգային բարդությունները⁶³:


Գծապատկեր X. Լիցենզիայի ստացման հետ կապված խնդիրների բաշխումը ՀՀ-ում, ըստ ուժգնության




⁶³ սույն պարբերությունում օգտագործվել են 147 աղյուսակի տվյալները

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.


Գծապատկեր XI. Աջակցող մեխանիզմների բացակայություն




Գծապատկեր XIII. Մալասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակ



Գծապատկեր XII. Օրենքի անմատչելիություն




Գծապատկեր XIV. Օրենքի հակասություններ և երկինաստություններ




Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.


Գծապատկեր XV. Ժամանակի կորուստ




Գծապատկեր XVI. Օրենքի կիրառման դժվարություններ ու բացեր



Գծապատկեր XVII. Անճանակն կապերի բացակայություն



Գծապատկեր XVIII. Օրենքի կիրառման ծախսատարություն



Պետք է նշել, որ հարցվողների պատասխանները երբեմն բնութագրվում են որոշակի սուբյեկտիվությամբ: Մասնավորապես արդեն իսկ կայացած տնտեսավարող սուբյեկտները հաճախ առաջարկում են գործունեության իրենց ոլորտը դարձնել լիցենզավորման ենթակա /ճիշտ հակառակ դիրքորոշումն է նկատվում գործարարության ոլորտում առաջին քայլերը կատարող անձանց մոտ/: Կարծում ենք, որ նշված առաջարկությունը պայմանավորված է միայն տվյալ ոլորտում հնարավոր մրցակիցների մուտքը խոչընդոտելու ցանկությամբ: Մյուս կողմից բավականին օբյեկտիվ է հնչում և չի կարելի ուշադրության չարժանացնել հարցմանը մասնակցած գործարարների այն փաստարկը, որ պատշաճ մակարդակով չի իրականացվում վերահսկողությունը լիցենզավորման ենթակա

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

գործունեության տեսակների նկատմամբ: Թերևս կարելի է պատկերացնել մեծ դժվարությամբ լիցենզիա ձեռք բերած գործարարի վերաբերմունքը, երբ նրա կողքին նույն գործունեությունը առանց լիցենզիայի իրականացնում է իր մրցակիցը՝ մեկ այլ տնտեսավարող սուբյեկտ:

Ըստ հարցվող գործարարների, նրանց մի մասը ցանկություն է ունեցել գործունեություն ծավալել շինարարության, բժշկության և ոգելից խմիչքների արտադրության ոլորտում, սակայն չկարողանալով հաղթահարել այդ ոլորտի համար անհրաժեշտ լիցենզավորման ընթացակարգային դժվարությունները, հրաժարվել է իր նպատակից:

Քանի որ վերևում խոսք գնաց հետազոտության առարկա հանդիսացող հարցերին համակարգված մոտեցում դրսևորելու մասին, ուստի ավելորդ չենք համարում անդրադառնալ հարցմանը մասնակցած գործարարների կողմից առաջ քաշված առաջարկությանը /միգուցե նաև «բողոքին»/, թեև որը հետազոտության առարկա չէր հանդիսանում /պայմանականորեն դա կարելի է դիտել որպես պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայություն/ և որպես հարց չի շոշափվել: Խոսքը վերաբերում է հանրապետությունում սկսնակ գործարարների վարկավորման մակարդակի մեծացմանը և գործունեությունը սկսելու առաջին իսկ պահից նրանց վրա ծանրացող հարկային բեռի թեթևացմանը:

ՍԱՍ 5. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն աշխատանքում բերված և հետագոտված հարցերը հնարավորություն են տալիս կատարել որոշակի եզրահանգումներ՝ ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ:

Գործընթացի վերլուծության հիմնական արդյունքներից կարելի է առանձնացնել այն, որ գործարար շրջանակներում ծագող վարչարարական խնդիրները գերակշռում են օրենսդրության կիրառական բնույթի խնդիրներին: Այսինքն, գործարար միջավայրն առանձնապես «գոհ» չէ պետական մարմինների և նրանց ներկայացուցիչների աշխատանքից: Եվ, չնայած երևույթը հատկանշական է «նոր» ստեղծված ձեռնարկությունների համար, այն ունի իր օբյեկտիվ պատճառը՝ կապված բնագավառը կարգավորող նորացված իրավական ակտերի կիրառման սկզբնական փուլում դրանց «յուրացման» ցածր աստիճանի հետ: Սրանով կարելի է բացատրել նաև այն հանգամանքը, որ նրանք համեմատաբար շատ են խնդիրները լուծում մասնագիտացված խորհրդատուների և պետական մարմինների ներկայացուցիչների միջոցով:

Ձեռնարկությունների պետական գրանցման փուլում առավել մեծ նշանակություն ունեն վարչարարական խնդիրները, այդ թվում՝ ժամանակի կորուստը, սպասարկման և պրոֆեսիոնալիզմի մակարդակը, աջակցող մեխանիզմների բացակայությունը: Չնայած դրան, հարցվածների գերակշիռ մեծամասնությունը գրանցման համար սահմանված կարգին իր իրազեկության աստիճանը համարում է բավարար սեփական գործը գրանցելու համար: Գրանցման քայլերն ըստ նվազող հաջորդականության խմբավորելիս, գործարար միջավայրում առավել խնդրահարույց են դառնում ֆիրմային անվանման գրանցումը և գրանցումը պետռեգիստրում: Հատկանշական է, որ հարցվածների 70%-ի կարծիքով Հայաստանում ձեռնարկություն գրանցելու համար պահանջվում է 8-ից 30 օր: Պետական գրանցման համար ծախսված գումարը հարցվածների գերակշիռ մեծամասնության մոտ գերազանցում է 50000 դրամը: Ըստ էության, այսպիսի բարձր ժամանակատարության և ծախսատարության ցուցանիշները բնութագրական են վարչարարական խնդիրների գերակայության տեսանկյունից: Դա է երևի պատճառը, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը կողմ է արտահայտվում «մեկ պատուհանի» կիսամասն սկզբունքին և կարծում, որ դրանում պետք է համատեղել ֆիրմային անվանման գրանցումը, գրանցումը պետռեգիստրում, ՀՎՀՀ-ի ստացումը, կնիքի թույլտվության ձեռքբերումը և գրանցումը սոցապ հիմնադրամում: Ահա, թե ինչ դիպուկ է արտահայտել իր կարծիքը հարցվածներից մեկը.

Այսօր Հայաստանի Հանրապետությունում կա «մեկ պատուհանի» սկզբունքի անհրաժեշտությունը, որովհետև շատ ժամանակ և գումար է ծախսվում ընկերություն հիմնադրելիս: Եթե կիրառվի «մեկ պատուհանի» սկզբունքը, ապա դա զգալի առաջընթաց կլինի և կհեշտացվի սկսնակ գործարարների աշխատանքը: Լավ կլինի, որ ընկերության գրանցման հետ կապված ամբողջ գործընթացը կենտրոնացված լինի մեկ տեղ և նույն տեղից ստանանք նաև իրավաբանական և տնտեսագիտական խորհրդատվություն: Համոզված եմ, որ «մեկ պատուհանի» մեխանիզմի ներմուծումը կնպաստի ավելի շատ իրավաբանական անձանց ստեղծմանը, քանի որ նման մեխանիզմ ներմուծելով հնարավորություն կտրվի գործարարին տնտեսել բավականին գումար և ժամանակ: Այդ ամբողջ գործընթացը կհամակարգի մեկ մարմին, կվերանա ավելորդ բյուրոկրատիզմը:

Պետք է նաև նշել, որ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրը իր գործունեության ընթացքում արդեն ձևավորել է որոշակի դրական վերաբերմունք, և բնավ պատահական չէ, որ գործարար միջավայրը «մեկ պատուհանը» ցանկանում է տեսնել այդ կառույցում:

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Ձեռնարկությունների՝ կորպորատիվ կառավարման հետ կապված խնդիրների շարքում գերակայում են գործընթացների ժամանակատարությունը, օրենքների կիրառման ծախսատարությունը և դրանցում առկա հակասություններն ու բացերը: Այս խնդիրները հատկապես սուր են կանգնում ԲԸ-ների առջև, չնայած որ տեսականորեն և գործնականում դրանք օբյեկտիվ են: Սրա հետ մեկտեղ, գործարարը դժգոհում է պետական մարմինների սպասարկումից և թերահավատորեն է վերաբերվում այդ կառույցների ներկայացուցիչների մասնագիտական որակներին: Արդյունքում, այս հարթությունում ձևավորվել է անվստահության որոշակի մթնոլորտ, որի հաղթահարման ճանապարհին գործարարը փնտրում և օգտագործում է անձնական կապեր ու հիմնավորում դրա անհրաժեշտությունը: Գուցեն, դրա պատճառով է, որ գործարար միջավայրում առավել մեծ տարածում է ստացել կորպորատիվ տարաձայնությունների և վեճերի լուծման ժամանակ արտադատարանական եղանակների օգտագործումը:

Ձեռնարկության լուծարման գործընթացում ծագող վարչարարական և կիրառական ամենագլխի խնդիրը գործարար միջավայրի համար հանդիսանում է աջակցող մեխանիզմների բացակայությունը: Ձեռնարկությունները կարծում են, որ այստեղ ավելի մեծ խնդիրներ են ծագում, քան գրանցման գործընթացում, հատկապես հարկային մարմինների հետ հարաբերություններում:

Ձեռնարկությունների՝ լիցենզիա ստանալու հետ կապված խնդիրներից պետության կողմից աջակցող մեխանիզմների բացակայությունը, սպասարկման ու պրոֆեսիոնալիզմի ոչ պատշաճ մակարդակը, օրենքի կիրառման դժվարություններն ու բացերը և ժամանակի անհարկի կորուստը դիտվել է որպես հիմնական խոչընդոտ: Ընդ որում լիցենզավորման գործընթացի հետ կապված խնդիրները ավելի ցավազին են ընդունվում մարզերում գրանցված ընկերությունների կողմից, որոնք այդ գործառնությունները ստիպված են իրականացնել ոչ թե տեղերում, այլ մայրաքաղաքում: Հատկանշական է նաև այն փաստը, որ հարցված գործարարների մեծ մասի համար որոշակի ոլորտներում, օրինակ շինարարությունում, բժշկության մեջ և ոգելից խմիչքների արտադրությունում գործունեություն ծավալելու համար էական խոչընդոտ է հանդիսանում նշված ոլորտներում գործունեության լիցենզավորման ընթացակարգային դժվարությունները: Ընդհանուր առմամբ լիցենզավորման գործընթացի հրապարակայնության և թափանցիկության աստիճանը գնահատվել է անբավարար:

Նաև նշենք, որ հարցվողները հարցազրույցների ընթացքում հաճախակի նշում էին հետազոտության խնդիրներին հարակից հարցերի մասին, որոնք հատկապես վերաբերում էին հանրապետությունում սկսնակ գործարարների վարկավորման մակարդակի մեծացմանը և գործունեությունը սկսելու առաջին իսկ պահից նրանց վրա ծանրացող հարկային բեռի թեթևացմանը:

Ամփոփելով հարցման հիմնական արդյունքները, կարելի է եզրահանգել, որ այն բավականին հարուստ նյութ տվեց բնագավառին առնչվող կառույցների, մասնագետների հնարավոր օգտագործման համար: Դրա արդյունքում այդ տեղեկատվության օգտագործողները կարող են կատարել անձնական եզրահանգումներ, մշակել օրենսդրության և վարչարարության բարելավման միջոցառումներ:

Ստորև ներկայացվում են մի քանի առաջարկություններ, հուսալով, որ դրանք ևս կարող են ներառվել նմանատիպ քննարկումների շարքում և դրանց համար, նպաստել Հայաստանյան գործարար միջավայրում բացահայտված այդ խնդիրների լուծմանը: Այսպես.

Վարչարարության բարելավմանն ուղղված գործողություններ

- նպատակահարմար է միջոցառումներ նախատեսել «մեկ պատուհանի» սկզբունքի գործարկման համար: Դրանք ցանկալի է, որ ներդրվեն աստիճանաբար՝ դրանում միավորվող գործառույթների մեթոդաբանության նախնական մշակման հիման վրա: Այն զգալիորեն կթեթևացնի սկսնակ գործարարի հոգսերը, հանգեցնելով ժամանակի կորստի նվազեցմանը և ծախսերի կրճատմանը:
- քննարկել այն բանի հնարավորությունը, որ ձեռնարկությունների լիցենզավորման գործընթացներում ևս սկսեն կիրառվել տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները՝ էլեկտրոնային եղանակով լիցենզիաների տրամադրման գործառույթների կազմակերպման նպատակով: Այդպիսի գործառույթներ սկսելու մտադրության մասին վերջերս տեղեկատվություն տարածվեց ՀՀ պետական ռեգիստրի կողմից:
- համապատասխան միջոցառումներ ձեռնարկել պետական մարմինների կողմից սպասարկման որակի բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, գործածության մեջ դնել միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մասնավոր և պետական հատվածների համագործակցության գործիքներ:
- Ձեռնարկել քաղաքաշրջանների պրոֆեսիոնալ որակների բարձրացմանը միտված քայլեր, քանզի օրենքների կիրառման վարչարարությունը ուղեկցվում է ոչ ստանդարտ մեկնաբանություններով: Այստեղ ավելի լայնորեն կարող են կիրառվել կադրերի վերապատրաստմանն ուղղորդված ուսուցողական և գործնական դասընթացներ: Ընդ որում, օրենսդրության կիրառման կոնկրետ հարցադրումների շուրջ նպատակահարմար է կազմակերպել նաև քննարկումներ կամ սեմինար խորհրդակցություններ՝ ներգրավելով գործարար միջավայրի ներկայացուցիչներին:

Պետական աջակցության մեխանիզմների ներդրմանն ուղղված գործողություններ

Հայաստանյան գործարար միջավայրը ակնկալում է պետության գնալով աճող աջակցությունը ձեռնարկատիրական գործունեություն սկսելիս, հատկապես դրա սկզբնական շրջանում: Այս առումով նպատակահարմար է.

- ՓՄՁ ԶԱԿ-ի նման կառույցների ակտիվացում՝ նոր գործ սկսողներին տարբեր աջակցող մեխանիզմների միջոցով «քաջալերելու», ինչպես նաև առաջին «փաթեթ» փաստաթղթեր (հաշվետվություններ և այլն) պատրաստելու հարցում:
- աջակցել կադրերի ուսուցման, որակավորման և վերապատրաստման հարցերում, սկսած արդեն իսկ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու մտադրության ձևավորման, հիմնադրման փուլից:
- տրամադրել անվճար բիզնես և մարքեթինգային խորհրդատվություն՝ նոր գործ սկսողներին՝ որոշակի ժամանակահատվածի ընթացքում:
- քննարկել «հարկային վարկ» տեսակի ինստիտուտի ներդրումը:

Օրենսդրական ակտերի կատարելագործում

Նպատակահարմար է ձևավորել համապատասխան մասնագետներից կազմված աշխատանքային խումբ (հստակ աշխատանքային ժամանակացույցով, մասնակիցների համաձայնեցված կազմով և իրավասություններով): Այդ խումբը կիրականացնի ձեռնարկությունների հիմնադրման, գրանցման և

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

լիցենզավորման գործընթացները կարգավորող օրենսդրական դաշտի (համապատասխան օրենքների և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի) համալիր ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով վեր հանել տարբեր օրենքներում, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներ կարգավորող օրենքներում և դրանցից բխող այլ իրավական ակտերում առկա հնարավոր հակասությունները և բացերը: Որպես ուսումնասիրության արդյունք աշխատանքային խմբի առջև պետք է խնդիր դրվի ներկայացնել առաջարկությունների համապարփակ փաթեթ՝ ինչպես դաշտի ընդհանրական հատակեցմանն ու պարզեցմանն ուղղված առաջարկներով (այդ թվում նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ), այնպես էլ՝ փոքր և միջին գործարարության համար օրենքների կիրարկման ծախսատարության կրճատման առումով:

Հավելվածներ

- 1. Աղյուսակ 1**
- 2. Աղյուսակ 2**
- 3. Աղյուսակ 3**

և այլն

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հավելված 1. Ընտրանքի կազմակերպման վերաբերյալ աղյուսակներ (1-6)

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հայաստանում ձեռնարկություն հիմնադրելու, գրանցելու և լիցենզիա ստանալու հետ կապված օրենսդրական և վարչարարական խնդիրների վերաբերյալ հետազոտություն, սեպտեմբեր-նոյեմբեր 2004թ.

Հավելված 2. Հարցման արդյունքային աղյուսակներ (7-155)